

Լ. ԽԱԿԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ՈՒԿՐԱԽՆԱՅՈՒՄ
XVI—XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Երեք հարյուր տարի սրանից առաջ՝ 1654 թ. հունվարին, տեղի ունեցավ պատմական խոշոր նշանակություն ունեցող մի իրադարձություն. ուկրաինական ազատասեր ժողովուրդը, հերոսական պայքար մղելով օտարերկրյա հարստահարիչների դեմ, վերամիավորվեց ռուս ժողովրդի հետ՝ մտավ ռուսական միասնական պետության կազմի մեջ:

Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ վճռական նշանակություն ունեցավ նաև օտար նվաճողների ծանր ու մղձավանջային ռեժիմի տակ հեծող հայ աշխատավոր ժողովրդի պատմական ճակատագրի համար:

Վերամիավորումով ուժեղացած և միջազգային հարաբերություններում կարևոր դեր ստանձնած ռուսական պետության շնորհիվ հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ հերոսական, բայց անհավասար մարտեր էր մղում մեկը մյուսին հաջորդող վայրագ ու գիշատիչ նվաճողների դեմ, վերջապես գտավ քաղաքական այն միակ ուժը, որն ի վիճակի էր և մեծապես շահագրգռված էր օգնության ձեռք կարկառելու անդրկովկասյան ժողովուրդներին, որոնց թվում և հայ ժողովրդին:

Սելջուկյան աշխարհավեր արշավանքների ժամանակներից սկսած, հայ աշխատավոր ժողովրդի հոծ զանգվածներ ստիպված են եղել հեռանալ իրենց հայրենի երկրից և համեմատաբար տանելի կյանքի ու ապրուստի պայմաններ գտնելու հույսով՝ թափառել օտար հորիզոններում:

XI դարից սկսած ուկրաինական հյուրընկալ երկիրը բարենպաստ պայմաններ ստեղծելով իսպառ բնաջնջումից փրկվելու տենչով Հայաստանից արտագաղթող աշխատավորների համար՝ դառնում է հայկական մարդաշատ ու նշանավոր գաղթավայրերից մեկը: Ուկրաինայում իրենց երկրորդ հայրենիքը գտած հայերը ստեղծագործ աշխատանքով ակտիվ դեր են կատարում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում, զարգացնում են իրենց բազմադարյա կուլտուրան՝ նոր պայմանների բարերար ազդեցության ներքո և շարունակում են պահպանել իրենց կապը մայր հայրենիքի հետ:

Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում ընդարձակվում ու մեծանում են հաջորդ դարերի ընթացքում և մայր երկրից քաշում են դեպի իրենց՝ ավելի ու ավելի մեծ թվով արտագաղթողների, որոնք, իրենց նախորդների օրինակով, հայրենի երկրին հասած նոր արհավիրքների տարիներին, մասսայաբար թողնում են իրենց տունն ու տեղը և հալթահարելով մեծ արգելքների՝ իրենց խարխիսն են ձգում ուկրաինական հողում:

XIII դարից հետո հին ռուսական երկրների թուլացման հետևանքով (որը նշանակալից չափով արգյունք էր թաթարա-մոնղոլական խաների

նվաճումները), ուկրաինական հողերը, անջատվելով Հյուսիս-Արևելյան Ռուսաստանից, մասնատվում և ավար են դառնում լիտվական, լեհական և հունգարական ֆեոդալների, սուլթանական Թյուրքիայի և Էրիմի խանության համար:

XIV դարում Ուկրաինայի մեծ մասը զավթում է պանական Լեհաստանը: Լեհական ֆեոդալները ուժեղացնում են Ուկրաինայում ճորտատիրական լուծը և տմարդի միջոցներով կեղեքում են ինչպես ուկրաինական գյուղացիությանը, քաղաքային աշխատավորությանը և կազակության ստորին շերտերին, այնպես էլ հայկական դադթավայրերի ընկալության մեծամասնությանը:

Վատիկանի օգնությամբ լեհ պաները ձգտում են ամենադաժան միջոցներով կաթուղիկություն տարածել Ուկրաինայում և լեհականացնել ուկրաինական ժողովրդին: Նույն քաղաքականության զոհ են դառնում նաև Ուկրաինայում հաստատված հայերը:

Պատմական սկզբնաղբյուրները հաղորդում են ուշագրավ տվյալներ Ուկրաինայում իրենց երկրորդ հայրենիքը գտած աշխատավոր հայերի ծանր վիճակի և ուկրաինական ժողովրդի ազատագրական հերոսական մարտերին ցուցաբերած նրանց համագործակցության ու ակտիվ համակրանքի մասին:

Այդ փաստերի վերհանումը և ուկրաինահայ զաղթավայրերի պատմության շարագրումը կարևոր մի աշխատանք է, որը նպաստելու է հայ-ռուսական և հայ-ուկրաինական բարեկամական դարավոր կապերի գիտական գնահատման շնորհալի գործին:

Այս համառոտ ակնարկի համեստ նպատակն է՝ ընդհանուր գծերով կանգ առնել միայն ուկրաինահայ զաղթավայրերի պատմության ամենանշանակալից դրվագների վրա՝ ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական մարտերի ժամանակաշրջանում:

1

Ուկրաինայում հայկական զաղթավայրերի սկզբնավորման պատմությունը մշուշապատ է: Պահպանվել է քննության կարոտ մի վկայություն այն մասին, որ դեռևս 1009 թվականին, ուսում իշխանները դիմել են իրենցից ոչ հեռու հաստատված ինչ-որ հայերի, միատեղ դուրս գալու համար Բոլեսլավ Քաջի (992—1025) դեմ¹: Լուրջ կասկածներ է հարուցում նաև 1062 թ. Կիևի մեծ իշխան Թեոդոր Դիմիտրևիչի կողմից հայերին շնորհված հրովարտակը²: Այնուամենայնիվ, XI դարի երկրորդ կեսում Կիևում հայկական գաղութի առկայությունը հավաստվում է կարևոր մի վկայությամբ, որի արժանահավատության մասին տարակուսանքներ չեն կարող ծագել:

¹ Л. Меликсет-Бек, Древняя Русь и Армения (отдельный оттиск из первого тома „Сборника трудов“ ин-та языка АН Арм. ССР), 1946, стр. 138.

² Պրոֆ. Ի. Ա. Լիցնիշենկոն, իր „Черты из истории сословий Юго-западной (Галицкой) Руси XIV—XV вв.“ աշխատության մեջ, ելնելով այն բանից, որ 1062 թ. Կիևում Թեոդոր Դիմիտրևիչ անունով մեծ իշխան չի եղել, ենթադրում է, որ այդ հրովարտակը կարող է շնորհված լինել Վոլինի իշխան Թեոդոր Լյուբարտովիչի (Լյուբարտի քրիստոնեական անունը եղել է Դիմիտրի) կողմից: Վերջինս վախճանվել է 1414-ին: Կա վկայություն այն մասին, որ նա դավանաբանական հարցերով վեճի է բռնվել Կիևի հայերի հետ (տե՛ս Ի. Ա. Լիցնիշենկոյի աշխատությունից արված քաղվածքը) տպագրված Մոսկվայում լույս տեսած „Վանդէս դրականական և սլատմական“ պարբերականի V դրերում, 1894, էջ 341—342):

Կիևո-Պեչորյան վանքի Հարանց վարքի (Патерик) մեջ տեղ է գտել մի գրվածք, հետևյալ խորագրով. «Житие преподобного отца нашего Агапита, врача безмездного, иже исцеляще молитвою недужных, подавая тем зелие от своего брашна, и Арменина врача спасе».

Այստեղ որոշակի կերպով ասված է, որ XI դարի վերջերին Կիևում կային հայեր, որոնցից մեկը նշանավոր էր որպես հմուտ ու ճարտար բժիշկ. «Бысть же в то время в граде Киеве врач некто, родом и верою Арменин, хитр зело во врачевании, яко прежде того не быти таковому»¹.

Կիևում հաստատված հայերի մասին վերոհիշյալ տվյալը իր հաստատությունն է գտնում հին ուսական հնագույն գրական հուշարձաններից՝ Բորիսի և Գլեբի վարքի մեզ հասած հայկական թարգմանության մեջ։ Ուշագրավ են այդ վարքի թարգմանության հանգամանքները, որոնք նույնպես խոսում են Կիևում հաստատված հայերի և Հայաստանի հետ ունեցած նրանց աշխույժ կուլտուրական կապերի մասին։

Վարքի թարգմանության մեջ ասված է, որ Շեն են այլ սքանչելիք սրբոցն (Բորիսի և Գլեբայ), գրեալ ի կատարեալ պատմութիւնն իւրեանց. և և կատարին նշանս մինչեւ ցայսօր, որոյ բազում ի մերոյ աշխարհէս տեսողք եղեալ պատմեն մեզ»։

Վարքի թարգմանությունը մուտք է գործել հայկական «Յայսմաւուրքի» Տեր-Խորայելի կատարած խմբագրության մեջ, որն ավարտված պետք է լինի 1251 թվականից առաջ (աշխատանքը կատարված է Վանական վարդապետի հանձնարարությամբ, իսկ վերջինս մահացել է այդ թվականին)։ Պարզ է, ուրեմն, որ մինչև 1251 թ. Շապուգի ի մերոյ աշխարհէս, այսինքն՝ Հայաստանից, եղել են Կիևում և ապա պատմել են թարգմանիչին կամ խմբագրողին Բորիսի ու Գլեբի վարքի և «հրաշագործություններին» հետ կապված պատմություններ, որոնց մասին նրանք յսել են Կիևում։

Որքան է եղել Կիևում հաստատված հայերի թիվը, ինչով են նրանք զբաղվել և ինչ սկզբունքով է կազմակերպված եղել այդ համայնքը, մենք չգիտենք։ Այդ մասին սկզբնաղբյուրները համար են։

Հայտնի է, սակայն, որ հայերը այնքան են բազմացել Կիևում և շրջակայքում, որ հայ եկեղեցին անհրաժեշտ է գտել ստեղծել այնտեղ հատուկ եպիսկոպոսական թեմ՝ ընդարձակ իրավասություններով։

Այս մասին տվյալներ կան XVII դարի երկրորդ կեսին ուկրաինահայ գաղութում գործող Հռոմի ագենտ, ֆանատիկ քարոզիչ Ալոյսիոս Պիգուլի «Կարճառոտ տեղեկությունք զարդի վիճակէ, զսկզբանէ և ծավալմանէ առաքելական քարոզութեանն առ Հայս Լեհաստանի, Վալախիոյ և մերձակայ աշխարհաց...» գրքում։ Նա հայտնում է որ «զԿիեւ ասեն լինել նախկին աթոռանիստ քաղաք արքեպիսկոպոսին Հայոց, ուրանօր պատրիարք

¹ Л. Меликсет-Бек, укр. соч., стр. 122.

² Պրոֆ. Լ. Մելիխսեր-Բեկը առանց բավարար հիմքի, կարծում է, որ «մերոյ աշխարհէս»-ի տակ պետք է հասկանալ «Բյուզանդիա», որովհետև, իբրև այդ վարքը պետք է թարգմանված լինի ոչ թե ուսական ընդգրկի, այլ ինչ-որ հունարեն թարգմանությունից (տե՛ս նշ. աշխ., էջ 130)։ Մեր կարծիքով վարքի հայերեն թարգմանության առաջին ուսուսասիրող Մ. Էմինը այս հարցում ավելի ճիշտ դիրքի վրա էր կանգնած։

կողէր արքեպիսկոպոսն և էր ընդ իշխանութեամբ կաթողիկոսին... այլ և իրաւունս ունէր ձեռնագրելոյ եկիսկոպոսունս»¹:

Մոնղոլները կողմից Կիևի գրավումից և նրա անտեսական ու քաղաքական դերի նվազումից հետո Կիևյան հայկական գաղութը անշքանում է: Այստեղից մեծ թվով հայեր գաղթում են Ուկրաինայի արևմտյան շրջանները՝ հատկապես Գալիցիո-Վոլինյան իշխանութեան սահմանները: Այնուամենայնիւ, հետագա դարերում ևս Կիևի հայկական գաղութը շարունակում է իր կիսակենդան գոյութիւնը: XVII դարի կեսերից կա վկայութիւն այն մասին, որ Կիևում գոյութիւն ունեն հայկական մի եկեղեցի, փոքրաթիւ թեմով²:

Գալիցիո-Վոլինյան իշխանութեան սահմաններում և, ընդհանրապես, Աջափնյա Ուկրաինայում հայկական գաղթավայրերի ստեղծման պաամութիւնը նույնպէս կարոտ է հատուկ քննութեան:

Հայտնի է, որ 1183 թվականին Լվովում հաստատված հայերը կառուցում են վայտաշէն մի եկեղեցի, որը հետագայում՝ 1363 թ. դարձնում են քարաշէն³:

Վաղ ժամանակներից հայկական գաղութ է հաստատվում նաև Լուցկ քաղաքում: XVII դարի սկզբի հեղինակ Սիմեոն Զամոստիեցին իր մեծարժէք «Ուղեգրութեան» մեջ, որի հետ առիթ կունենանք ի մոտո ծանոթանալու, հիշատակում է, որ՝ «Առաջին Լուցքան ԸՃ. (800) տուն էր, գեղեր, ագարակնի ունէր և շատ վախճիք, և անդ էր յառաջն աթոռ (եպիսկոպոսութեան)»⁴:

Սիմեոնի ժամանակ, սակայն, Լուցկի 800 տնից կազմված հայկական գաղութից մնացել էր միայն ճերկու տուն հայի»:

Հայկական հնագույն գաղթավայր էր հաստատված նաև Խանքերման (Ակկերման) քաղաքում. պատերազմի ժամանակ Մանքերմանի հայերը հնարավորութիւն ունեին կովի վաշտ հանելու 500 ռազմիկներ. «Յորժամ սէֆէր լինէր՝ հինգ հարիւր հոգի կելէր հայոց ի պատերազմ» հայտնում է նույն Սիմեոնը Մանքերմանի անցյալի մասին և վշտով արձանագրում, որ «այժմ չորս տուն հայի մնացել է»:

XIII դարում հայերը բնակութիւն են հաստատում նաև Վլադիմիր քաղաքում⁵, Կամենեց-Պոդոլսկի շրջակայքում, ուր հիմնում են երկու գյուղ՝ Армяне և Армянки անուններով⁶, իսկ այնուհետև նաև Արևմտյան Ուկրաինայի մի շարք այլ քաղաքներում և քաղաքատիւ վայրերում: Ուշագրավ է, որ օտար հարստահարիչների տիրապետութեան տակ գտնվող ուկ-

¹ «Եւնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովայ, Ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 16:

² Նույն տեղում, էջ 15:

³ Մ. Բեկլյան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 104:

⁴ Սիմեոն զպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, հրտ. Ն. Ակիմյան, «Հանդես ամսօրյա», 1935, էջ 170:

⁵ Ա. Պիդուն նույնպէս հայտնում է, որ «Զկնի Կիևի Լուցք կարևոր է արքեպիսկոպոսութեան Հայոց, այլ վարդիս զրէաթէ ոչ որ ի Հայոց բնակէ անդ»:

⁶ «Ուղեգրութիւն», ՀԱ, 1939, էջ 170:

⁷ Ի. Ա. Լիսնիշևսկի, Լեհաստանի և Արևմտյան-Հարավային Ռուսիայի հայերը («Հանդես զրականական և պատմական»), հինգերորդ դիւր, 1894, էջ 342:

⁸ Е. К. Колонизация армян в Юго-западной России, Каменец-Подольск, 1903, стр. 2.

րախնական հողերը հայերի տեսանկյունից միշտ էլ դիտվել են որպես ոռոգական տերիտորիա. «Ի դաւառն ըոգաց, որ այժմ տիրեն Լեհք», այդպես է կոչում իր նոր հայրենիքը Սիմեոն Ջամստիեցին։

1364 թվականին հայ եկեղեցին ուկրաինահայ գաղութի հոգևոր գործերի կառավարման համար ստեղծում է նոր թեմ, որը պետք է հովիվեր Լվով, Վլադիմիր (Քլաւատեմիր) և Լուցկ քաղաքներում ու շրջակա վայրերում հաստատված հայերին։ Նորաստեղծ այդ թեմի վրա կարգված եպիսկոպոսը (ստաջինն այդ աթոռի վրա եղել է Գրիգոր անունով մեկը) կոչվում է «արքեպիսկոպոս Հայոց Լվովի և ամենայն Ռուսաց և Վլախաց (Մուդավիայի)», ինչպես պարզ երևում է այստեղ ևս այդ և Ուկրաինայի հայաբնակ մյուս քաղաքները դիտված են որպես ոռոգական քաղաքներ։ Նշենք դրանցից կարևորները՝ Յազլովեց, հայտնի է եղել ամեն տարի փետրվարի վերջին լուսավոր իր տոնավաճառով յոթ ժողովին բազմութիւն Հայոց յարևմտից», Յարոսլավ, Սնեատին, Ստուգենց, Ռաշկով, Ստանիսլավով, Ջամստիե, Գալիչ, Պոդչայցի, Բրոտի, Ժվանեց, Գորոգենկա և այլն²։

Նշված հայկական դադթավայրերից Ուկրաինայի հայերի տնտեսական ու կուլտուրական կյանքում XVI—XVII դարերում առաջնակարգ դեր կատարեցին երկուսը՝ Լվովը (ադրյուրներում կոչվում է Իլով, Լով, Լեոպոլիտ, Լեմբերգ) և Կամենեց-Պոդոլսկը։

Կամենեցի հայերը սկսած 1344, իսկ Լվովինը՝ 1356 թվականից արդեն պետական որոշ առանձնաշնորհումներ էին ստացել և իրենց դատական գործերում ինքնավար էին։ XIV դարի սկզբից սկսած Լվովն ու Կամենեցը, Կրակովի հետ միասին, խոշոր դեր էին կատարում մի կողմից զերմանական և լեհական պրովինցիաների, և մյուս կողմից՝ Ուկրաինայի, Մուդավիայի, Վալախիայի ինչպես և Թյուրքիայի և մոնղոլական խանությունների միջև կատարվող աշխույժ առևտրում։

Առևտրական ճանապարհները Լեհաստանից՝ Լվովի և Կամենեցի վրայով անցնում էին հարավ, դեպի Սուչավա, հարավ-արևելք՝ Դնեստրի վրայով դեպի Բելգրադ, ինչպես և դեպի թաթարական տիրույթները։

Արտահանվող ապրանքների մեջ կարևոր տեղ էին բռնում մահուդե գործվածքները, քաթան, թավիշ, գլխարկներ, գոտիներ, ապա՝ սրեր, թրեր, դանակներ, մանգաղներ, գերանդրներ, սրաքարեր, ցինկե ամանեղեն և այլն։ Ներմուծվում էին արևելյան համեմունքներ՝ պղպեղ, կոճապղպեղ (имбир), խունկ, լիմոն, ապա մետաքսյա և բամբակյա զանազան գործվածքներ, թամբի կաշի, ինչպես և Ուլափնյա Ուկրաինայից՝ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, մորթիներ, բուրդ և այլն։ Հունգարիայից ներմուծվում էին ձիեր, արծաթ, մոմ և այլն։ Ներմուծվող ապրանքների մեծագույն մասը, սակայն, սպառվում էր ոչ թե տեղական շուկաներում, այլ արտահանվում էր դեպի Արևմտյան Եվրոպայի այլ երկրներ³։

XV դարի երկրորդ կեսից ուկրաինական գյուղատնտեսական շուկան սովելի խոշոր նշանակություն է ստանում։ Ուկրաինական հացը, անասուն-

¹ Ա. Պիլու, Նշ. աշխ., էջ 15։

² Հմմտ. Ա. Պիլու, Մ. Բժշկյան, Ի. Ա. Լիննիչենկո և այլն։

³ Город Коменец-Подольск, историческое описание св. Е. Социнского, Киев, 1895, стр. 223—226.

Տեղեկագիր 4—4

ները, անտառանյութը Գալիցիայի վրայով սկսվում է արտահանվել դեպի Կենտրոնական Եվրոպայի շուկաները, և գետերի վրայով՝ դեպի Բալթիական նավահանգիստները:

Այս առևտրի մեջ կարևոր գեր էին կատարում նաև Ուկրաինայի քաղաքներում հաստատված հայերը:

Հատկապես մեծ էր հայերի դերը արևելյան ծագում ունեցող ապրանքների ներմուծման գործում, պրոֆ. Բ. Ա. Լիննիչենկոն, հենվելով Վ. Լոզինսկու հրատարակած նյութերի վրա, նկատում է, որ «Հարավային Ռուսաստանում և Հեհաստանում այն աստիճանի սովոր էին տեսնել հայերին արևելյան ապրանքների վաճառորդների մենաշնորհային դերում, որ մի ամբողջ շարք արևելյան այգալիսի ապրանքներ կրում էին ուղղակի «հայկական ապրանք» անունը»¹:

Մեզ արդեն ծանոթ Սիմեոն Ջամոստիեցին, XVII դարի առաջին կեսին ծանոթանալով Լվովի հայկական գաղութի կյանքին, հայտնում է, որ այստեղ հաստատված հայ խոշոր առևտրականներն իրենց գործակատարներն ունեն Կ. Պոլսում, Անկարայում, Սպահանում, Մոսկվայում, Գդանսկում, Պորտուգալիայում և այլ վայրերում: Լսենք նրան.

«Իսկ քաղաքացիքն (Լվովի)՝ պերճ փառաւոր, փարթամ և փառաւորք որսլէս զիշխանս, պարթևք և ազնաւորք, զգեստ ունին մեծագին, քամխա, սօֆ, սկառլաթ, շուխայ և սամուր, գտակ խաւրիֆայ: Ոմանք ունէին գիւղք, այլք ագարակ և աւանս, բայց այժմ շունին, զի անցեալ են տեարքն և գեղքն այլոց ֆնացեալ, բայց անուանք հայոց դեռ կան ի վերայ գիւղիցն...: Եւ չկա մէջ նոցա արվեստաւորք, այլ ամէնքն վաճառականք են, մեծ և անուանիք, ունին և վէքիլնի Ստապօլ, Անկուրի, Սպահան, Մօսքով, Կըտանսք, Պօրթուկալ և այլն. կան ի մէջ նոցա խոճայք, որ ունին ԾՌ (50,000), ԿՌ (60,000), ԶՌ (80,000) և ՃՌ (100,000) ղուոուշ կամ աւելի: Ունին մուլքեր, պաղ ու պաղչանի, պտղատու ծառեր, պարտէզք, բուրաստանք, ծաղկաստան և վարդենիք, այլ և բարձր սարայք, դարպասանի և աղբերք յորդարուիսք, և լիճք ի մէջն մեծ և լայն, լի ձկամբ, զոր ոմանք և աշտարակք և սարայնի ունին ի վերայ ջրոյն դարմանաշէն» և այլն²:

Որպես հայ գաղթականների բնակատեղի, անշուշտ, Լվովից ավելի մեծ նշանակութիւն ունեն Գամենեց-Պոդոլսկը: Լվովի հայկական գաղութը, առկա տվյալների համաձայն, 70-ից ավելի հայ տուն չի ունեցել: 1407 թ. Լվով քաղաքի պարիսպներից ներս հաշվվում էր ընդամենը 63 հայ տուն³, 1575 թ. նույնպես 60-ից չի անցնում Լվովի հայ ընտանիքների թիվը⁴: Համարյա նույն վիճակն ենք տեսնում նաև XVII դարի սկզբներին: Սիմեոն Ջամոստիեցին հայտնում է, որ «Կայր Քաղաքն եօթանասուն տուն հայի, ամէն տուն երկու-երեք տանուտեր»⁵: Այնինչ Կամենցում 1575 թ. ապրում էր ավելի քան 300 հայ ընտանիք⁶, Կա նաև տեղեկութիւն այն

¹ Օգտվել ենք միջնորդութամբ Հ. Մելիքսեթ-Բեկի (տե՛ս Древняя Русь и Армения, стр. 113).

² ՀԱ, 1935, էջ 164:

³ Ի. Ա. Լիննիչենկո, նշ. աշխ., էջ 340:

⁴ Город Каменец-Подольск, стр. 214.

⁵ ՀԱ, 1935, էջ 169:

⁶ Город Каменец-Подольск, стр. 214.

մասին, որ հայ բնտանիքների թիվը այստեղ հասել է նույնիսկ մինչև 1200-ի, քաղաքի տներից մոտ 900-ը պատկանել է հայերին¹։

Թվական այս տվյալները, անշուշտ, ստատիկ վիճակ չէին ներկայացնում, այլ ենթակա էին հաճախակի փոփոխությունների։ Գաղթավայրերի բնակչությունը մերթ ավելանում էր թյուրքական ու պարսկական բարբարոս լծի տակ կեղեքվող հայ աշխատավորների հաշվին, և մերթ էլ պակասում լեհական իշխանությունների բռնություններից ու կամայականություններից, ինչպես և թյուրքական ու թաթարական արշավանքների սարսափից։

Այսպես, օրինակ, 1413 թ. Խյուրքիայից և այլ վայրերից Մուղա-վիա գաղթեց 3000 հայ բնտանիք։ Սրանք հաստատվեցին Սուչավայում և այլ քաղաքներում, մի մասը, սակայն, հետագայում գաղթեց Լվով։

Փոքր Ասիայից հայկական նոր գաղթարշավ սկսվեց դեպի Աջափնյա Ուկրաինա XVI դարի վերջին և XVII դարի սկզբին՝ ջալալիների ապստամբության կապակցությամբ։

Գաղթողներից շատերը, հատկապես թոխաթցի հայերն անցան Մուղավիա, Էրիմ, Արևմտյան Ուկրաինա և այլ երկրներ։ Գաղթականության այս նոր հոսանքը որոշ աշխուժություն մտցրեց ուկրաինահայ գաղթավայրերի կուլտուրական ու տնտեսական կյանքում, շատացավ հայերեն լեզվով խոսողների թիվը, հրապարակ եկան մի շարք կուլտուրական գործիչներ ու բանաստեղծներ և այլն։

Ուկրաինահայ գաղթավայրերի բնակչությունը, հատկապես Կամենեց քաղաքում՝ հսկայական չափով նվազեց թյուրքական կարճատև տիրապետության տարիներին (1672—1699 թթ.)։

Հայ բնակչության կազմի այսպիսի փոփոխությունների մասին տեղյակներ կարելի է բերել ուկրաինական հայաբնակ այլ քաղաքների նկատմամբ ևս։ Սակայն, չնայած այդ փոփոխություններին, Լվովն ու Կամենեցը, սկսած XIV դարից, և՛ իրենց տնտեսական վիճակով, և՛ իրենց հայ բնակչության քանակով՝ առաջին տեղն էին բռնում ուկրաինահայ գաղթավայրերի շարքում։

Բացի միջազգային տարանցիկ առևտրի մեջ կատարած աչքի ընկնող իրենց դերից Լվովի և Կամենեցի հայ առևտրական մեծահարուստ տները լայնորեն զբաղվում էին նաև վաճառական և բանկային գործունեությամբ։ Այսպես, օրինակ, Բոգդան Դոն-Օվակովիչը, որն ապրում էր Կամենեցում, իսկ հետո՝ XVI դ. սկզբին տեղափոխվեց Լվով, բազմաթիվ անգամ մեծ գումարներ փոխ տվեց Սիգիզմունդ Գ-ին։ Վազիսլավ Թագավորը նույնպես հաճախ գիմում էր հայ վաճառողների օգնությամբ։

Մի խումբ խոշոր մեծատուն վաճառող-առևտրականներ դրամի ու ժով ձեռք էին բերում նաև անշարժ կալվածքներ, գյուղեր, ագարակներ, այգիներ և այլն։ Իսկ նրանցից մի մասը նույնիսկ մտնում էր լեհ ազնվականության շարքերը՝ ձեռք բերելով շյախտիչի կոչում։ «Հայք ոմանք մեծատունք, — գրում է այդ մասին Ա. Պիգուն, — ընկալեալ էին զպատիւ ազնուականութեան լեհացւոց»²։

¹ Ի. Ա. Լիցիչենկո, Նշ. աշխ., էջ 340։

² Город Каменец-Подольск, стр. 214—215.

³ «Բռնի միություն», էջ 222, տես նաև Ի. Ա. Լիչենկո, Նշ. աշխ., էջ 333։

Արտոնյալ ու տնտեսապես ապահով վիճակումն էր գտնվում նաև ուկրաինահայ գաղթավայրերի հոգևորականությունը: Նրանց ընչաքաղց և անբարոյական ճշգրիտ նկարագիրը տրված է «Վիպասանութիւն Նիկոլական» ուշագրաւ չափածո գրվածքի մեջ¹: Հոգևոր առաջնորդները, գրում է այդ գրվածքի հեղինակ Սիմեոն Զամոստիեցին՝

«Զինչ որ կասեն՝ ինքեանք շառեն,
Եւ վասն դրամի քարոզեն,
Զամեն քաղաք ժողով կանեն,
Ով որ քիչ տայ՝ կու բանադրեն,
Կուտեն, խումեն, կուբախանան,
Վասն օրինաց բնաւ յըհոդան»²:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ խոշոր առևտրականներից, վաշխառուներից և հոգևորականներից կազմված այս վերնախավը, Ուկրաինայի հայկական գաղթավայրերի բնակչության մեջ, թվական տեսակետից, փոքրամասնություն էր կազմում:

Ուկրաինահայ գաղթավայրերի հիմնական բնակչությունը կազմված էր արհեստավորներից, առևտրականների գործակալներից ու գործակատարներից, կարավանների ուղեկիցներից, ինչպես նաև հողագործներից և անասնապահներից:

Կային այնպիսի գյուղեր և քաղաքատիպ վայրեր, որոնցում բնակություն հաստատած հայերը ամենաթշվառ պայմանների մեջ էին գտնվում՝ կրելով իրենց վրա լեհական կալվածատերերի ճորտատիրական լծի ողջ ծանրությունը: Այսպես, օրինակ, Մնեատինի հայերը, Ա. Պիդուլի վկայությամբ՝ «Աղքատ են յոյժ, դի խաշնսրածութեամբ կեան ամենեքեան»³:

Ուկրաինայի համարյա բոլոր հայաբնակ քաղաքներում հայերը ձեռք էին բերել դատական գործերում ինքնավարություն արտոնագրեր և ունեին սեփական դատարաններ: Գատարանում նախագահում էր Վոյթը, որը միևնույն ժամանակ հայկական համայնքի ներկայացուցիչն էր պետության առաջ: Վոյթ էր ընտրվում ցմահ հաստատված 12 դատավորներից մեկն ու մեկը:

Կամենեցում և այլ քաղաքներում, բացի այդ, գոյություն ունեւ 40 հոգուց բաղկացած մի մարմին, որի անդամները կոչվում էին քառասուն եղբարք: Այդ մարմինը նույնպես ունեւր վերնախավերի ներկայացուցիչների մի խորհուրդ էր, որն, ի միջի այլոց, իր միջից ընտրում էր նաև 12 դատավորներին: Մ. Բժշկյանը տեսել է ձեռագիր մի երգարան, որի հիշատակարանում գրված է եղել. «Յիշատակ է պարոն Թաթուլին, որդւոյ պարոն Գրիգորին՝ Կամենեցոյ տօլվաթաւոյ քառասուն եղբարցն մէկ, թվ. ՌՂԳ (1644)»⁴:

¹ Ն. Ակինյանը համոզիչ փաստերով ասպարեցում է, որ անանուն հասած այդ գրքվածքի հեղինակը՝ մեզ արդեն ծանոթ ուղեգիր Սիմեոնն է (տես Ն. Ակինյանի «Սիմեոն գյրի Լեհացւոյ երկու յիշատակարանք» հոդվածը, տպ. ՀԱ, 1936, էջ 246—258):

² Ղ. Ալիբաև, Կամենից, Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, հաւատաշեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 203:

³ «Բոնի միութիւն», էջ 97:

⁴ Մ. Բժշկյան, Նշ. աշխ., էջ 156:

Վերահիշյալ մարմինների միջոցով Ուկրաինայի հայկական գաղթավայրերի շահագործող վերնախավերը հնարավորություն էին ստանում չարաշահելու իրենց դիրքը և ճնշելու ու հարստահարելու արհեստավորական ու աշխատավոր մյուս խավերին:

Արհեստավորները քաղաքներում, առանց ազգության խտրության¹, ընդգրկված էին «братства»-ների (եղբայրություններ) — այսինքն՝ «համաքարություններ») մեջ²:

Աղբյուրներում հիշվում են հետևյալ համաքարությունները՝ Քիւրքոյ և Թերղընուն և որոնք ասխով կու բանին», Սուրուկճոց, Կոչքարաց, Մաղմանոդաց, Խասապոյց և այլոց³:

Ամեն մի համաքարություն, տարին մեկ անգամ, որոշված օրը, հավաքվում և բնորում էր իր անդամներից երկու ժողովուրդայն (староста) և մեկ «բիսար» (писарь — գրագիր): Համաքարության գանձանակը պահվում էր ստորոստայի մոտ կամ քահանայի խցում: Այն կողմում էր երկու տարբեր փականներով, որոնցից մեկի բանալին պահվում էր «պիղտի ցեխ» միսգրին ձեռն և միւս բալինք աւագ եղբոր ձեռն: Համաքարությունները գումարում էին իրենց «սեսիաները», որտեղ քննարկում էին զանազան ներքին հարցեր, դատում էին զանցանքի մեջ մեղադրվող անդամին, տուգանում նրան և այլն: Բոլոր անդամները պարտավոր էին մասնակցել հասարակական հանդեսներին ու տոներին և ունենալ միմյանց հանդեպ որոշ պարտավորություններ⁴:

Միևնույն համաքարության կազմի մեջ ընդգրկված ուկրաինացի, հայ և լեհ արհեստավորները, տնտեսական միևնույն շահերով շահկապված, միասնաբար հանդես էին գալիս քաղաքային ինքնավար մարմիններն իրենց ձեռքում կենտրոնացրած շահագործող վերնախավերի դեմ:

Բացի արհեստավորական համաքարություններից, Ուկրաինայի քաղաքներում կային նաև երիտասարդ ու ամուրի մարդկանց միավորող «կտրիճներ» եղբայրություններ, որոնց ստեղծման հանգամանքների և ֆունկցիաների մասին մեզ մատչելի աղբյուրներում կան միայն կցկտուր ակնարկներ:

Որոշակի և հնագույն տեղեկությունը այդ տիպի կազմակերպության գոյության մասին, վերաբերում է 1522 թվականին: Կամենեցի հայոց սուրբ Աստվածածին եկեղեցու նվիրաբերությունների մատյանում, այդ թվականի տակ գրանցված է հետևյալը. «Միարան կտրիճներն նկարել ետուն զկես եկեղեցին՝ հանդերձ բոլորովին պատկերներով»⁵:

Նիկոլ Թորոսովիչի արքեպիսկոպոսության ժամանակ (1623—1681) ստեղծվում է նաև Ստանիսլավովի «կտրիճ»-ը եղբայրություն-ը և այլն⁶:

¹ Колонизация армян в юго-западной России, стр. 9.

² Հայերը այդ «братства»-ները կոչում էին ուսական տերմինով, փոքր ինչ աղավաղված՝ «պրասգավա» ձևով:

³ Մ. Բժելյան, Ճանապարհորդութիւն, էջ 182:

⁴ Տվյալները քաղում ենք Ռաշկով քաղաքին 1751 թ. իշխան Հ. Լյուբոմիրսկու կողմից տրված «Բրիվկիկ»-ից (Приймалягия), որը կազմված է «ամենայն քաղաքաց» արտոնագրերի օրինակով (տես Մ. Բժշկյան, Նշ. աշխատություն, էջ 165—163):

⁵ Մ. Բժելյան, Ճանապարհորդութիւն, էջ 149:

⁶ Ղ. Ալիսանի «Կամենիցում» հրատարակված «Եկեղեցական ժամանակագրութիւն ԺԱ. ամաց» խորագրով փոքրիկ խրոնիկայի մեջ, 1690 թ. տակը գրված է. «Վարդան ար. -

Հայանի է, որ Ուկրաինայում հաստատված հնագույն հայկական համայնքները կազմակերպված էին աշխարհագրորի մեջ և զինական պատկանելի ուժ էին ներկայացնում, Հարավային Ռուսիայի իշխանները XI—XIII դարերում երբեմն դիմում էին նրանց զինական օգնությանը: Այսպես, օրինակ, 1280 թվականին, Գալիցիայի իշխան Լև Դանիլովիչը, հրավիրում է հայերին իր զորքի մեջ մտնել, հարևան ֆեոդալների դեմ կռվելու համար¹:

Հայկական զինական ուժերը մասնակցում են 1410 թ. Գրունովադյան ճակատամարտին, որտեղ ռուսական, լիտվական և լեհական զինական միացյալ ուժերը փայլուն հաղթանակ տարան տևողական օրդենի շուն-ասպետների նկատմամբ (հայկական զորաբաժիններն այստեղ մտնում էին լեհական բանակի մեջ): Արդեն առիթ ունեցանք նշելու, որ ուկրաինահայ հնագույն գաղթավայրերից մեկում՝ Մանջերմանում (Ակկերման) Սիմեոն Ջամոստիեցու ժամանակ դեռ չէին մոռացել, որ անհրաժեշտության դեպքում՝ «հինգ հարիւր հոգի կելեր Հայոց ի պատերազմ»²:

Հայկական աշխարհագրային միավորումները հնում կոչվում էին „Рыцари деви Марии“ («Կոյս Մարիամի ասպետներ»), Սրանց միջոցով էր, որ հայկական գաղթող համայնքները, դիմագրելով մոնղոլական, թյուրքական ու թաթարական բռնակալներին, ճանապարհ էին հարթում իրենց համար հայրենի երկրից, կամ հարավային Ռուսաստանի հայկական հնագույն գաղթավայրերից (Մարայ, Աղով, Ղրիմ և այլն)՝ դեպի Արևմտյան Ուկրաինայի քաղաքները:

Աշխարհագրային այդ կազմակերպություններն անհետ չվերացան հետագա դարերում, երբ ուկրաինահայ համայնքները տնտեսական ու քաղաքական բնագավառներում ձեռք բերեցին կայուն վիճակ և մշտապես հաստատվեցին իրենց նոր հայրենիքում: Ղրիմի թաթարների և օսմանյան թյուրքերի հաճախակի արշավանքների ու ասպատակությունների ժամանակ նրանք կազմակերպում էին խիզախ դիմագրություն, պաշտպանելով իրենց նոր ձեռք բերած տունն ու տեղը: Ըստ երևույթին, նրանք կարևոր դեր էին կատարում նաև որպես առևտրական կարավաններին ուղեկցող զինված ուժեր:

Մեր կարծիքով ուկրաինահայ գաղթավայրերում հիշվող «կտրիճներին» եղբայրությունները սերտ կապ պետք է ունենան այդ հին աշխարհագրային կազմակերպությունների հետ: Բսկ այս վերջինները կյանքի էին կոչվել հայկական համայնքներում ոչ թե գաղթի ճանապարհին կամ նորաստեղծ գաղթավայրերում, այլ ծագել էին և կարևոր դեր էին կատարում Հայաստանի քաղաքներում, առնվազն սկսած XII դարի սկզբից³:

XVI դարի վերջին լեհական իշխանությունները հատկապես ուժեղացրին իրենց ագրեսիվ քաղաքականությունը Ուկրաինայի նկատմամբ:

Պանական Լեհաստանի քաղաքականությունը հանդիպում էր, սակայն,

Եպիսկոպոսն յայս տարի, նոյեմ. 10. գմեր Սղանիսլավու. կտրիճվորաց եղբայրութիւնն նոր յիւրմէն տված կոնդակովն երկուսումն կու հաստատէ, զորն որ վաղուց նիկօլ Թորոսովիչն հիմնել էր» («Կամենից», էջ 129):

¹ Колонизация армян, стр. 1—24.

² ՀԱ, 1935, էջ 170.

³ Այս մասին տես մեր «Երզնկայում 1280 թ. կազմակերպված «եղբայրությունը» խորագրով հոդվածը. տպ. Հայկական ՍՍՌ ԳԱ, 1951, № 12 Տեղեկագրում:

ակտիվ գրիմագրության ուկրաինացիների և լեհական լծի տակ կեղեքվող մյուս ժողովուրդների կողմից: Որպես գրիմագրության կազմակերպչական կենտրոններ XVI դարի ընթացքում, և հետագայում, Ուկրաինայի տարբեր քաղաքներում ստեղծվեցին «եղբայրություններ», որոնք միավորում էին քաղաքային բնակչության լայն շերտերին, և կատարում էին կուլտուրական ու քաղաքական կյանքի գեր: Անշուշտ, այդ նորաստեղծ կազմակերպությունների օրինակով աշխուժանում են նաև ուկրաինացի գաղթավայրերում գոյություն ունեցող «կտրիճներ» եղբայրությունները և ստեղծվում են նման նոր կազմակերպություններ:

2

«Լեհական պաները Վատիկանի օգնությամբ, կատաղի հարկադրանքի միջոցներով Ուկրաինայում սերմանում էին կաթոլիկություն, մտցնում էին եկեղեցական ունիա, վարում էին ուկրաինացիներին բոնի կերպով լեհացնելու քաղաքականություն, ծաղր ու ծանակի էին ենթարկում ուկրաիններեն լեզուն և ուկրաինական կուլտուրան, փորձելով հոգեպես ստորկացնել ուկրաինական ժողովրդին և ոչնչացնել նրա կապերը ողջ ժողովրդի հետ»¹:

Այս նույն քաղաքականությունը, նույն խստությամբ ու նույն ստոր միջոցներով, լեհ պաները կիրառում էին նաև Ուկրաինայում հաստատված հայերի նկատմամբ:

Արդեն XV դարից սկսած, քայլ առ քայլ սահմանափակվում են հայկական համայնքների դատաստանական արտոնությունները: Հայտնի է, որ 1350 թ. Կամենեցի հայերը իրավունք ունեին նույնիսկ մահապարտ հանցավորներին սպանության դատապարտել առանց պետական իշխանությունների միջամտության²: Սակայն այդ արտոնյալ վիճակը երկար չի տևում, 1444 թ. հրովարտակով, օտար երկրներից Լվով եկող բոլոր վաճառականները, որոնց թվում նաև հայերը, ենթարկվելու էին լեհական մագիստրատի դատական իրավասությանը: 1476 թ. հրովարտակով Լվովի հայերի քրեական գործերը՝ սպանություն, վիրավորություն, բռնաբարություն, ենթարկվում են քաղաքի վոյթի և քաղաքային լաշևիկների դատաստանին:

1510 թ. գողության և անշարժ կայքերի վերաբերյալ գործերի քննությունը նույնպես հանձնվում է քաղաքի դատաստանի իրավասությանը³:

Այնպես, որ հայերի դատաստանական իրավասության սահմանները աստիճանաբար սղվում են: Հետագայում փորձեր են կատարվում ընդհանրապես այդ իրավասություններին վերջ տալու և հայ համայնքները քաղաքների լեհական մագիստրատներին ենթարկելու ուղղությամբ:

Շատ շուտով սկսվում է նաև հալածանք ուկրաինացի ինքնավար կրոնական համայնքի դեմ: Կաթոլիկ միսիոնարները, չխորշելով ոչ մի ստոր միջոցից, լեհաստանի ներքին գործերի տնօրինությունն իրենց ձեռքը վերցրած պապական նունցիաների և լեհ թագավոր Սիգիզմունդ Բ-ի

¹ Թեդիսներ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի մասին (1654—1954), հավանություն են ստացել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի կողմից («Ազիտատորի բլոկնոտ», 1954, № 2, էջ 8):

² Ղ. Ալիբեև, Կամենեցի, էջ 131:

³ Ի. Ա. Լիսնիչենկո, Նշ. աշխ., էջ 350—351:

(1520—1572) ակտիվ օժանդակությամբ, արդեն XVI դարի կեսերից աշխատում էին լեհական լծի տակ կեղեքվող բոլոր ոչ կաթոլիկ ժողովուրդներին (որոնց թվում նաև հայերին)՝ դարձնել կաթոլիկ¹։

Այս նպատակին հասնելու համար Արևմտյան Ուկրաինայի շրջաններն են ուղարկվում Եզովիտյան ու Թեագիդյան կարգի միսիոնարներին անձանակ խմբեր²։

Այս քաղաքականությունը նոր ընթացք է ստանում XVI դարի վերջին, 1596 թվականին, ուկրաինական ուղղափառ եկեղեցու բարձրագույն պաշտոնյաների և լեհական իշխանությունների միջև կայացած համաձայնությամբ, կնքվում է Բրեստի եկեղեցական ունիան, որը պետք է ուժեղացներ Ուկրաինայի կախումը Լեհաստանից, Ունիայի միջոցով ուղղափառ եկեղեցին ընդունում էր պապի գերիշխանությունը և կաթոլիկ եկեղեցու կազմակերպչական մի շարք ձևեր և ծեսեր։ Ունիայի կողմնակիցները, սակայն, հանդիպեցին ուկրաինական գյուղացիության, քաղաքացիների, շլյախտայի և շարքային հոգևորականության վճռական դիմագրությունը, որի հետևանքով այն չիրականացավ³։

Ունիայի ձախողումը, բնավ չի թուլացնում կաթոլիկ միսիոնարների գործունեությունը Ուկրաինայում։ Ընդհակառակը, ամբողջ XVII դարի ընթացքում, շարունակ, է՛լ ավելի ստոր միջոցներով, Վատիկանի ազենտները ձգտում են իրագործել Ուկրաինայի կաթոլիկացումը, իսկ լեհական իշխանությունները՝ Ուկրաինայի լեհականացումը։

Կաթոլիկ քարոզիչ Մատթեոս Բեմբուսը 1629 թ. կրկին դիմում է ուկրաինացիներին կաթոլիկությունն ընդունելու ուղերձով։ Հաջորդ թվականին (1630թ.) նա նույնպիսի առաջարկ է անում նաև հայերին և հայկական համայնքի մեջ երկպառակություն ձգելով՝ ձգտում է հասնել իր նպատակին։

Այդ դիմումները ոչ միայն չեն ծառայում իրենց նպատակին, այլև առաջ են բերում հսկայական դիմագրություն և՛ ուկրաինացիների և՛ հայերի կողմից։

Ուկրաինահայ աշխատավորներն իրենց եկեղեցու, ազգային տրադիցիաների ու իրավունքների պաշտպանության գիրքերում մարտնչում են անօրինակ համառությամբ։ Տեղի են ունենում զինված ընդհարումներ և ժողովրդական հուզումներ, մինչև որ կաթոլիկները հենվելով ուկրաինահայ գաղթավայրերի ծախված վերնախավերի՝ բարձրաստիճան հոգևորականության ու մեծահարուստ առևտրական ու վաշխառուական տների վրա՝ կարողանում են կոտրել ժողովրդի դիմագրությունը և ընդունել տալ «Ունիան»՝ այսինքն՝ ուկրաինահայ եկեղեցին ենթարկել Վատիկանին և կաթոլիկական ծեսեր մուծել հայ եկեղեցում։

Շուրջ հինգ տասնամյակ տևող, մի կողմից անձնուրաց դիմագրություն և մյուս կողմից քսու նենգություն ու բռնության գրվագներով հարուստ այս պայքարի պատմության հետ՝ արժե ծանոթանալ փոքր ինչ մանրամասներին։

¹ Симашкович, Римское католичество и его иерархия в Подолии, стр. 87.

² Колонизация армян, стр. 12.

³ История СССР, том I, 1947, стр. 488—489.

Մելքիսեդեկ տխրահոշակ կաթողիկոսը (1593—1626), որը 1610 թ. հպատակության թուղթ էր առաքել Հռոմի Պողոս Ե. պապին, 1623 թ. գարնվում էր Լվովում: Ուկրաինահայ եպիսկոպոսական թափուր աթոռի համար անհրաժեշտ էր ձեռնադրել եպիսկոպոս: Եվ ահա նա, Թորոսովիչների հարուստ ընտանիքից ստանալով մեծ կաշառք, համաձայնություն է հայտնում 22-ամյա անբարոյական Նիկոլ արեղա Թորոսովիչին՝ ձեռնադրել եպիսկոպոս: Այդ ընտրությունը մեծ դժգոհություն է առաջացնում ուկրաինահայ համայնքներում: Լվովի հայերը վճռականորեն դեմ են դուրս գալիս Նիկոլին և հայտարարում են կաթողիկոսին, որ թոչ է դա մեզ ընդունելի՞ք¹:

Վատիկանին ծախված և Նիկոլի կողմնակիցներից կաշառված կաթողիկոսի համար ժողովրդի ցանկությունը, իհարկե, արժեք չէր կարող ունենալ: Եվ քիչ անց, քաղաքից դուրս գտնվող հայկական Հաճկատար Աստվածածին վանքում, կաթողիկոսը գիշերով գաղտագողի կատարում է եպիսկոպոսական ձեռնադրություն արարողությունը: Այնուհետև, բանագրության թուղթ գրելով Լվովցի հայերին և ստիպելով ընդունել Նիկոլին որպես եպիսկոպոս, Մելքիսեդեկ կաթողիկոսն անցնում է Կամենեց և վախճանվում այնտեղ (1626 թ.): Լվովի հայ համայնքի և եպիսկոպոսի միջև տեղի են ունենում աղմկալից բախումներ: Նիկոլը, լեհական իշխանությունների օժանդակությամբ, թյուրքական լրտես կոչելով, վտարել է տալիս լեհական սահմաններից Գրիգոր Կեսարացի վարդապետին, որը փորձում էր պատվարել ուկրաինահայ համայնքները կաթոլիկացման վտանգից:

Համոզվելով, որ առանց կաթոլիկների և լեհական իշխանությունների բացարձակ օժանդակության չի կարողանալու կոտրել ժողովրդի դիմագրությունը, Նիկոլը՝ 1630 թվականին դիմում է Լվովում հաստատված եղվիտներին, միաբանում է նրանց հետ և ձեռագիր է տալիս այն մասին, որ ձեռն Նիկոլայոս եպիսկոպոս Հայոց, իմովս կամաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ, և մտի ի հնազանդութիւն փափին ամենայն հետեւելովքն իմովք՝ կատարել զամենայն հրամանս, որ առ ի նմանէք²:

Լվովի ժողովուրդը և հայ եկեղեցուն չգավաճանած հոգևորականներն ու մեծատունները լսելով այդ մասին, Վիսփուցանեն զգրուես եկեղեցեաց ամուր վականօք և ուխտեն երգմամբ՝ ի չարչարանս ամենայն գալ մանաւանդ, քան ի ծառայութիւն ուրացեալն Նիկոլիք³:

Հայերի դիմագրությունը կոտրելու համար Լվովի լեհական իշխանությունները պահանջ են ներկայացնում՝ բացել եկեղեցու դռները և հնազանդվել իրենց եպիսկոպոսին, սակայն ապարդյուն. «Մինչև երեք անգամ այսպէս կրկնեաց իշխանն, և հայք ոչ զեկեղեցին բացին, և ոչ ի գատաստան եկին»⁴:

Հարցը լուծվում է դենքի ուժով:

«Ապա յաւուր միում,—պատմում է Առ. Դավրիժեցին,—ժողովեցան բաղում եկեղեցականք յնշվայիթայ կարգէն, նաև այլոց ևս կարգացն, առին և զբազում տղայս ի դպրոցացն, գնացին առ արքեպիսկոպոսն իւրեանց,

¹ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, էջ 280:

² Առ. Դավրիժեցի, էջ 289:

³ «Բռնի միութիւն», էջ 156:

⁴ Առ. Դավրիժեցի, էջ 289—290:

առին և կարգաւորս ի նմանէ, գնացին առ իշխան քաղաքին և առ դատաւորս, առին ի նոցանէ զղօրականս և զգատաւորս ընդ իւրեանց, սոքա ամենեքեան եկին ի դուռն եկեղեցւոյն Հայոց, զոր իշխանք Հայոց փակեալ էին... հարեալ խորտակեցին զդուռն եկեղեցւոյն, և առեալ ղնիկոյ եպիսկոպոսն մուծին յեկեղեցին, և ի նա յանձնեցին ղեկեղեցին ամենայն ընչիւք»¹:

Նիկոլը, տեր դառնալով Լվովի եկեղեցիներին, վատնում է նրանց գանձատներում ամրարկած եկեղեցական մեծարժեք սպասները և հաղարից ավելի «ընտիր ու պատվական» ձեռագրերը:

Նա նույնիսկ օտարազգի ոսկերիչներ ի միջոցով հալել է տալիս եկեղեցական թանկարժեք սպասները, մսխում է շոայլորեն իր անձի վրա և եկեղեցական ունիայի իրագործման նպատակներով:

Հայերը բոյկոտի են ենթարկում իրենց եկեղեցիները, հրաժարւում են կաթոլիկ ծեսով պատարագին մասնակցելուց. «Սոյն պատճառի վասն ե պսակք և մկրտութիւնք խափանեցան, զորս տարեալ յայլ քաղաքս՝ պսակէին և մկրտէին, և զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին» և այլն, գրում է Առ. Դավրիժեցին²:

Տարիներ շարունակ լեւ իշխանությունները պատժում, բանտարկում և տուգանում են Նիկոլին չենթարկւող հայերին, բայց դիմագրությունը կոտրել նրանց չի հաջողւում, «Դանձի որպէս ի ժամանակս կոապաշտ թագաւորացն ունէին քրիստոնեայքն զհալածանս, այսպէս և յայսմ Ժամանակի եղև ի վերայ ազգին հայոց բնակելոցն Իլով քաղաքին» — գրում է ժամանակակից նույն պատմիչը:

1631 թ. հուլիսի 25-ին Լվովի հայերը էջմիածին են ուղարկում իրենց դառն վիճակի նկարագրությամբ մի բողոքագիր, որտեղ վերոնշյալ դեպքերի մասին հայտնում են ուշագրավ տվյալներ: Նրանք գրում են.

«Կաթոլիկ եկեղեցականքն յատինացուց, և ոստիկանք քաղաքին Իլովայ ջաղխեցին զփականս և զծիւնիս եկեղեցւոյն և ի ներքս մուծին զանիծեալն (Նիկոլ) ... չեպիսկոպոսն ոչ միայն եհան ի մէնջ ... համօրէն զեկեղեցիս, որով խափանեաց զկարգս աստուածապաշտութեան այլ և չտայ իսկ թոյլ թաղել զմեռեալս: Ունի նա զքահանայս մեր, որ հաւատարիմքն իցեն օրինաց մերոց և ոչ կամիցինն հնազանդիլ իշխանութեան նորա, գան հարկանէ զնոսա և կապեալս արկանէ ի բանա և ոչ արձակէ՝ մինչև դարձցին և ընկալցին զլատինացւոցն զհաւատս: Եւ ոչ ոք է, որ պատժիցէ

¹ Առ. Դավրիժեցի, էջ 290:

² Մեղ արդեն ծանոթ Սիմեոն Ջամոստիեցին, իր ընդօրինակած ձեռագրերից մեկի հիշատակարանում (Մատենադարան, Ձեռ. № 1004), Լվովի եկեղեցիներից Նիկոլի կողմից թալանված հարյուրավոր ձեռագիր գրքերի առթիվ խորին ցավ արտահայտելով, և համոռոտակի թվարկելով այդ ձեռագրի բովանդակությունը, հիշատակարանի այդ հատվածն ավարտւում է հետևյալ խոսքերով. «Եւ դայն ամենայն վերոյգրեալ մարայ խաղինան՝ ի միում ամի կորոյս» (№ 1004, էջ 193ա): Նիկոլ եպիսկոպոսի ընչաքաղց ու անբարոյական կերպարը նույն հիշատակագիրը պատկերում է այսպես. «Էր յոյժ անառակ և վայրասպար, ունէր մարդիկ աշխարականք և կարգաւորք Ի.-Լ. (20—30), պահէր պետավիճիան, կառս մեծադինս և տաճիկ ձիան, և ինքն յաղանէր բեհեզս և ծիրանիս, մախմուր և աթլաղ, ներքեանց սամուր մորթի կամ վաշախ, դաւադանն բուն արծաթի» և այլն. (№ 1004, էջ 194ա):

³ Առ. Դավրիժեցի, էջ 292:

զնա. քանզի համօրէն իշխանաւորք աշխարհայինք և եկեղեցանք ի կողմն նորա են և մանաւանդ Յիսուսեանք: Բողոքելով բողոքեցաք մեք առ արքայ. այլ չեք ընկալեալ մեր հրաման յարգարելոյ ատեան հարցափորձից և դատաստանի, և աստուծոյ է միայն գիտելի՝ թէ երբ զայն ընկալցուք. եւ թէ լինիցի իսկ ատեան դատաստանի՝ խիթամք թէ և յայնժամ ոչ գայցէ յերևան ճշմարտութիւնն, քանզի որ ի Վարչավայ նստի նուիրակն և այլ եկեղեցականք լատինացւոց և առաւել ևս Յիսուսեանք յամենայն զօրութենէ իւրեանց պաշտպանին անիծեալ եպիսկոպոսն...» և այլն¹:

Շատ շատերը, ինչպես հաղորդում է Առ. Դավրիժեցին, չհանգուրժելով իրենց ազգային տրագիդիաների ու եկեղեցու լեհ իշխանությունների կողմից բռնի ոտնահարման փաստերին, ստիպված թողնում են իրենց նոր հայրենիքում ստեղծած տունն ու տեղը և ճելեալ ի բնիկ աշխարհէն հեռացան, անջատելով յրնտանեաց և յազգաց, պանդուխտք և նշդեհք չընդգայեալք յօտար աշխարհի. և այսպիսի կենօք՝ հեծելով և յոգւոց հանելով վախճանեցան²:

Վատիկանի հավատի ծավալման ժողովը (Congregation de Propagande fide) ուկրաինահայ գաղթավայրերում Ունիայի գործը հաջողությամբ ի կատար ածելու առաջադրանքով, 1663 թվականին Լվով է ուղարկում Թեոդինյան միաբանության հայտնի գործիչ, Հայաստանում երկար տարիներ կաթոլիկություն քարոզած Կղեմես Գալանոսին, ուղեկցությամբ Ալոիսիոս Պիգուլի, որը նրա փոխանորդն ու աջակիցը պետք է լիներ: Նրանք իրենց առաքելության հենց առաջին օրերին հասկացնում են Նիկոլին, որ անհրաժեշտ է շատ ավելի վճռական միջոցների դիմել ժողովրդի դիմադրությունը կոտրելու և ուկրաինահայ եկեղեցին Վատիկանին ենթարկելու համար: Լվովում բացած գպրոցում Կ. Գալանոսն ու Ա. Պիգուլն ուկրաինահայ տարրեր գաղթավայրերից հավաքագրած երիտասարդների դաստիարակում են կաթոլիկության ոգով և նրանցից պատրաստում են հլու կամակատարներ՝ Ունիայի գործը հաջող կերպով գլուխ բերելու համար:

Լեհ իշխանավորներից, արքունիքից (հատկապես թագուհուց) և կաթոլիկ հոգևորականությունից ամեն կարգի օժանդակություն ստանալով, Ունիայի դեմ մաքառողներին ստոր միջոցներով բանտարկել տալով. երկրից վտարելով ու հալածելով, Նիկոլին հաջողվում է 1664 թվականին՝ 41 տարի պայքարելուց հետո, Լվովում կաթոլիկ ծեսով պատարագ անել:

Լվովի հայերի խիզախ դիմադրությունը ի վերջո հաղթահարվում է շնորհիվ հայ համայնքի վերնախավերի՝ մեծահարուստ վաճառականների ու հոգևորականության դավաճանության. «Զի կարգաւորքն ամէն և մեծամեծքն հետ Նիկօլ եպիսկոպոսին էին», ասում է այդ մասին Սիմեոն Զամոստիեցին, Երևանի Մատենադարանի № 1004 ձեռագրի հիշատակարանում³:

«Բազում ունէր նա օգնական՝
Կարգաւորք և աշխարհական՝
Դատաւորք և պարոն՝ և իշխան»

¹ «Բռնի միութիւն», էջ ԻԷ—ԻԸ. քաղված Դ. Տոլստոյի Catholicisme Romain en Russie, հտ. Բ., էջ 401-ից:

² Առ. Դավրիժեցի, էջ 206:

³ Ձեռագիր № 1104, էջ 194ա:

գրում է նույն Սիմեոնը. «Վիսպասանութիւն նիկոլական» չափածո իր գըր-
վածքի մէջ¹:

Ա. Պիդուս իր «Կարճառօտ տեղեկութիւնք զարդի վիճակէ, զսկզբանէ
և ծաւալմանէ առաքելական քարոզութեանն առ հայս Լեհաստանի...» հու-
շատետրի մէջ, այլ և այլ առիթներով հիշատակում է կաթողիկոսյան տա-
րածման ջերմ պաշտպաններից ու գործակիցներից շատերի անունները:
Դրանցից էր. օրինակ, աշխարհե աշխարհ շրջագայած (անկասկած՝ որպէս
առևտրական) և բազմաթիւ լեզուներ գիտցող ոմն Ղազար Սլոնիովսկի, որը
մի քանի տարի առաջ ձեռք էր բերել լեհ ազնվականի կոչում: Ահա այդ
մարդը, Ա. Պիդուսի խոսքերով ասած, «Նախանձախնդիր էր փառացն աս-
տուծոյ և դարձուցանելոյ զհայրենակիցս իւր ի կաթողիկոսիւն»²:

Ունիայի ջերմեռանդ պաշտպաններ էին նաև Զախնովիչը, որին Ա. Պի-
դուս Լվովի հայոց գլխավոր (վոյթ) է... կոչում և Կապրովսկին, «որ վարէ
զպաշտօն քարտուղարին հայոց»: Այս երկուսը, ինչպէս և բազմաթիւ այլ
մեծահարուստ անձինք Ա. Պիդուսի խոսքերով՝ «Կաթողիկք են ջերմեռանդ
և պաշտպան առաքելութեան»³:

Լվովի հայերի երկարամյա ու համառ դիմադրությունը կոտրելուց
հետո, Կղմես Բալանոսին հաջորդած Ա. Պիդուսի միջոցով, Վատիկանի
ազենտները պահանջում են Նիկոլ Եպիսկոպոսին անհապաղ մեկնել Կամե-
նեց և Ունիայի գործը գլուխ բերել նաև այնտեղ:

Նիկոլը, իրավամբ, Կամենեցի հայերից սպասում էր ոչ պակաս հա-
մառ դիմադրություն, ուստի և չէր շտապում իրականացնելու այդ «առա-
քելությունը»:

Ի վերջո, 1666 թվականին, Նիկոլը, ընկերակցությամբ Վատիկանի գոր-
ծակալ Պիդուսի, ձեռքին ունենալով արքունական հրովարտակ, որով պատ-
վիրվում էր Պոդոլսկի զորապետին (որը միաժամանակ Կամենեցի ամրո-
ցասկետն էր) անհրաժեշտության դեպքում զինական օգնություն ցույց տալ
Վատիկանի «առաքյալներին»՝ մեկնում է Կամենեց-Պոդոլսկ:

Կամենեցի հայերի դիմադրությունը շատ ավելի ուժեղ էր, քան սպաս-
վում էր: Միայն երկարատև, համառ պայքարից հետո, լեհ իշխանություն-
ների և կաթողիկ բարձրաստիճան ու ազդեցիկ հոգևորականության միջամը-
տությամբ ու ակտիւ օժանդակությամբ, հնարավոր եղավ կոտրել այդ դի-
մադրությունը: Կամենեցի հայերը, հաղթահարելով մեծ դժվարություններ,
պատվիրակություն ուղարկեցին Վարշավա, գրեցին խնդրագրեր, հատուկ
պատգամավորի միջոցով ստացան էջմիածնի կաթողիկոսից ևս թագավորի
անունով խնդրագիր և այլն: Սակայն, պայքարն անհավասար էր. Եվ 1666 թ.
հոկտեմբերի 1-ին կաթողիկ ծեսով պատարագ մատուցվեց նաև Կամենեցի
հայկական եկեղեցիներում:

Ինչպէս Լվովում, այնպէս էլ Կամենեցում հայ բնակչության մեծա-
գույն մասը երկար ժամանակ շարունակում էր առերես միայն ընդունել
կաթողիկոսյունը: Շատերը հրաժարվում էին եկեղեցի հաճախելուց, ան-
հրաժեշտության դեպքում եկեղեցական խորհուրդները ծածուկ անել էին

¹ «Կամենից», էջ 213:

² «Սլոնի միութիւն», էջ 36:

³ Նույն տեղում, էջ 38:

տալիս լուսավորչական քահանաների միջոցով, և կամ մեծ դժվարություններով անցնելով լեհական սահմանը, դիմում էին դեպի Մոլդավիա, ուր կային հայկական լուսավորչագավան եկեղեցիներ։ Կամենեցի հայերից շատերը տոն օրերին գնում էին Մոլդավիայի Պոտին քաղաքը։ Այս բանին ևս Վատիկանի ագենտները արգելք են հարուցում։ Նրանց սադրանքով Պոդոլսկի լեհական զորքերի փոխհրամանատարը արգելում է հայերին քաղաքից դուրս գալ նախատոնակ և տոն օրերին¹։

Եվ, այսպես, քայլ առ քայլ, լեհ զինվորական իշխանությունների գործուն օժանդակությամբ, Վատիկանի Հավատի ծավալման ժողովի ստոր գործակալները, ոտնահարելով ուկրաինահայ գաղթավայրերի բնակչության դարավոր տրագիդիաները, բռնաալով նրանց կամքի վրա, իրագործում են եկեղեցիների միությունը (Ունիան)։ Վատիկանը այդ ճանապարհով երկպառակություն է մտցնում հայ եկեղեցու մեջ և գրավում է հարուստ մի թեմ, իսկ լեհական կառավարությունը, վճռական մի քայլ է կատարում ուկրաինահայերին լեհականացնելու ճանապարհին։

3

Ուկրաինահայերի բոնի կաթոլիկացման ուղղությամբ լեհ իշխանությունների և Վատիկանի ագենտների գործունեությունը, ինչպես տեսանք, հատկապես մեծ ծավալ ստացավ XVII դարի կեսերին, ճիշտ այն ժամանակ, երբ ուկրաինական ժողովուրդը հերոսական մարտեր էր մղում իր ազատագրության համար։

1648—1654 թթ. ժողովրդական-ազատագրական պատերազմը հանդիսացավ ուկրաինական ժողովրդի պատմության ամենափառավոր էջերից մեկը։ Այդ պատերազմի գլխավոր և վճռական ուժը գյուղացիությունն էր, որը պայքարում էր լեհական և ուկրաինական ճորտատեր-ֆեոդալների սոցիալական լծի ու օտարերկրյա բռնակալության դեմ։ Դյուրացիության հետ մեկտեղ ազատագրական պայքարին մասնակցում էին նաև կազակության և քաղաքային բնակչության լայն մասսաները, ինչպես նաև կազակային վերնախավերը (վերջիններս ելնելով, անշուշտ, իրենց նեղ դասակարգային շահերից)։

Ուկրաինական ժողովուրդը 1648—1654 թթ. պատերազմում պայքարում էր պանական Լեհաստանի լծից ազատագրվելու և, միաժամանակ, ուս եղբայրական ժողովրդի հետ, միասնական ռուսական հզոր պետության հետ վերամիավորվելու համար։

Ուկրաինայի հայկական գաղթավայրերի բնակչության աշխատավոր հիմնական մասը, բնականաբար, ջերմ համակրությամբ պետք է վերաբերվեր և ակտիվորեն մասնակցեր ուկրաինական ժողովրդի մղած պայքարին։ Եվ, ընդհակառակը, ուկրաինահայ գաղթավայրերի վերնախավերը (մեծահարուստ առևտրականներն ու բարձրաստիճան հոգևորականությունը), անդավաճան իրենց դասակարգային շահերին, պետք է հանդես գային պայքարող կողմերից լեհերի բանակում, ուստի և ընդդեմ ինչպես ուկրաինացի ժողովրդի, այնպես էլ ուկրաինահայ գաղթավայրերի աշխատավոր բնակչության։

¹ «Բոնի միություն», էջ 89։

Մեզ մատչելի պատմական սուղ տվյալները որոշակիորեն հաստատում են այս ենթադրությունը:

Ուկրաինահայ աշխատավորության ջերմ համակրանքը Ուկրաինայի ազատագրման համար մարտնչողների առաջին շարքերում գտնվող Զապորոժյան կազակների նկատմամբ իր արտահայտությունն է գտնում Բոգդան Խմելնիցկու գործունեությունից դեռևս շատ առաջ:

«Ֆեոդալական-ճորտատիրական և ազգային ճնշման դեմ, ինչպես նաև թյուրք-թաթարական հարձակումների դեմ ուկրաինական ժողովրդական մասսաների պայքարի ընթացքում ստեղծվեց ռադիկալ ուժ ի դեմս կազակության. նրա կենտրոնը 16-րդ դարում դարձավ Զապորոժյան Սեչը, որը պրոգրեսիվ դեր խաղաց ուկրաինական ժողովրդի պատմության մեջ, ինչն ժամանակ, երբ կազակային-ավագային ունևոր վերնախավի մի մասը ժամանակ առ ժամանակ համաձայնություն էր գտնում լեհական շլյախտայի հետ, կազակային շարքային մասսաները գյուղացիության և քաղաքային չքավորության հետ միասին անհաշտ պայքար էին մղում ֆեոդալական-ճորտատիրական և ազգային ճնշման դեմ: Լեհական շլյախտայի և տեղական շահագործողների տիրապետության դեմ գյուղացիական-կազակային ապստամբությունները մեկը մյուսի ետևից ցնցում էին Ուկրաինան և Բելոռուսիան: 16-րդ դարի վերջում և 17-րդ դարի առաջին կեսում Ուկրաինայում առավել խոշոր ժողովրդական ապստամբություններ տեղի ունեցան Կոսիրսկու, Նալիվայկոյի, Տարաս Ֆեոդորովիչի (Տրյասիլոյի) և ուրիշների ղեկավարությամբ»¹:

Ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական այս շարժումների մասին ուկրաինահայ գաղթավայրերում գրված պատմական սկզբնաղբյուրների մեջ պահպանվել են համակրանքով լի ուշագրավ վկայություններ:

Այսպես, օրինակ, Սևերին Նալիվայկոյի գլխավորությամբ 1594 թ. բռնկված ապստամբության առանձին դրվագների մասին Հովհաննես Ավագերեցը «Կամենեցի տարեգրքում» պատմում է հետևյալը.

«Թվ. ՈՒԴ (1595)... եւ ի սոյն ամի խաղախներն ժողովեցան մի վայր, զոր ոմանք ասացին եթէ էին իրրեւ 20.000, և մտան պատրաստութեամբ զինուք յերկիրն օլախաց (իմա Մոլդավիա)... մինչ զօլախաց պարոն սկհարոն (թյուրքերի գրածոն—Լ. Խ.) երկրէն փախուցին, և զօրքն կոտորեցին...: Եւ յետ սակաւ աւուրց դարձեալ անցին օլախաց երկիր. և գնացին և հաշտեցան և երգուան միմեանց, և միաբանեցան հետ պարոնին. և մտան թուրք աշխարհ վասն պատերազմելոյ ի հետ տաճկաց: Զոր երկնաւոր աստուած տացէ նոցա կարողութիւն և զօրացուցէ զնոսա... գի փոքր մի ժամանակ խաղաղութիւն գտցէ ազգն քրիստոնէից... Եւ է գլխաւոր սոցա միոյն անուն Լօպօտայ և միւսոյն Նալիվայքո»²:

Այնուհետև տարեգիրը տվյալներ է հաղորդում կազակների հաջող մարտերի մասին՝ թյուրքերի դեմ, իսկ 1596 թվականի տակ գրանցում է Նալիվայկոյի և Լոպատայի պարտության պատմությունը: Հայտնում է, նաև

¹ Թեգիսներ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի մասին (1854—1954) («Աղիտատորի բոկնոտ», 1954, № 2, էջ 10—11):

² «Կամենեց», էջ 59:

որ «էր այս նալիվայքո աղքատ տանէ այս (Կամենեց) քաղաքիս, և եղև գլուխ ի վերայ խաղախներաց, բայց էր ինքն հմուտ կովոյ և քաջ պատերազմող»¹։

Ուշագրավ տվյալներ են հաղորդում ուկրաինահայ գաղթավայրերում ստեղծված պատմական գրվածքները նաև լեհերի ու թյուրքերի միջև 1621 թվականին տեղի ունեցած խոտինի ճակատամարտի մասին, որի հաջող վախճանն ապահովեցին կազակներն իրենց խիզախությամբ ու մարտունակությամբ։

Կամենեցի հայերը պատերազմի հաղթական ավարտից հետո հնարավորություն ունեցան հյուրընկալելու հաղթող բանակին և ի մոտո շփվելու կազակների հետ։ Կազակների հնարամտությամբն ու խիզախությամբն զարմանք էր պատճառում նրանց։ խոտինի պատերազմի մասին կարևոր և փաստական ստուգված նյութերով հարուստ մի աշխատություն է գրել Կամենեցի հայերից մեկը՝ Հակոբ քահանայի որդի Հովհաննեսը։ Աշխատությունը, որ վերջերս միայն հայտնաբերվեց Մատենադարանում Հայկական ՄԱԽ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտ. աշխատող Հ. Անասյանի կողմից՝ կրում է հետևյալ խորագիրը՝ «Պատմութիւն պատերազմին խոտինու, ի ժամանակս սուլթան Օսմանին տաճկաց և ի կաթողիկոսության Հայոց Մելքիսեդի սրբոյ Էջմիածնի... արարեալ ուրեմն Յովհաննու անիմաստ հետևողի, ի խնդրոյ հօր իւրոյմ՝ տէր Յակօր բարեսէր քահանայի...»²։

Գրվածքի հեղինակին հիացմունք է պատճառում կազակների օրինակի զիսցիպլինան և կազմակերպչական հիմունքները։ Կազակները պատվից ղրկում, իսկ քիչ անց նաև գլխատում են իրենց զորահրամանատար Բորոգավկային, այն բանի համար, որ ի գալն իւրեանց ի խոտին ուղարկեալ էր չօրս հազար խաղախ ի յերկիրն Պուլտանաց վասն ագահութեան, որ կորեան անդ անօգուտ առանց գիտութեան ընկերացն...»³։

Ինչպես ասացինք արդեն, Ուկրաինայի հայկական գաղթավայրերի աշխատավորական խավերը ոչ միայն համակրանքով էին վերաբերվում, այլև անձամբ մասնակցում էին իրենց եղբայրակիցների պայքարին՝ օտարերկրյա նվաճողների դեմ։

1648 թ. Բոգդան խմելնիցկու կոչով Կամենեցի շրջակայքի բոլոր գյուղերը ապստամբում են։ Երբ Բոգդան խմելնիցկին ժելտիե Վոդի ու Կորսունի մոտ ջարդեց լեհերին՝ կազակները Մաքսիմ Կրիվոնոսի հրամանատարությամբ առաջին անգամ մոտեցան Կամենեցին։ Ժողովրդական ապստամբությունն այդ ժամանակ արդեն բռնկվել էր ողջ Պոդոլիայում։

Լեհերը, պատասպարվելով Կամենեցի բերդում, իրենց ողջ հույսը դրել էին բերդի ամրությունների վրա։ Նրանք, գրում է այդ մասին Կամենեց քաղաքի պատմության հեղինակ Ե. Սոցինսկին՝ «նույնիսկ երկյուղ էին կրում Կամենեցի ուս (իմա ուկրաինացի) և հայ բնակչությունից, մի բան, որ չափազանց բնական էր, որովհետև քաղաքի բոլոր արվարձանները, որոնք բնակեցված էին ռուսներով (իմա ուկրաինացիներով), համակրում էին կազակներին և ապստամբել էին լեհերի դեմ»⁴։

¹ «Կամենից», էջ 61։

² Զեռագիր № 2644, էջ 229 ա—233 բ։

³ Նույն տեղում, էջ 240 բ։

⁴ Город Каменец-Подольск, стр. 28.

Քաղաքի ու կրօնացիների և հայ բնակչության համակրանքը կազակների հանդեպ և նրանց պատրաստակամությունը ապստամբներին միանալու ակնհայտ էր:

Կամենեցի լեհ իշխանությունները, այդ պատճառով, 1649 թվականին խնդրագրի են ներկայացնում Վարչավայի Սեյմին, որով անհրաժեշտ են գտնում Կամենեցի հետևակազորի շարքերը մաքրել ուկրաինացիներից ու հայերից: Նրանք գրում են. «Ցանկանում ենք, որ Կամենեցի հետևակազորը կազմվի գերմանական կամ լեհական ժողովրդից, և ոչ տեղի քաղաքացիներից կամ արհեստավորներից»¹:

1662 թվականին հատուկ որոշում է կայացվում, որով խիստ պատիվ սահմանելով՝ արգելվում է Կամենեցի կայազորում բացի լեհերից ու գերմանացիներից, այլ ազգություն պատկանող զինվորներ հանդուրժելը:

Այդ որոշման մեջ ասված է.

«Եթե սեյմի կողմից նշանակված կոմիսարները տեղի (Կամենեցի) հետևակազորի կազմում գտնեն քաղաքացիներ և կամ արվարձանների բնակիչներ (предмещан), ապա նրանց փոխարեն տեղական ուսումիստները պետք է վարձեն լեհ կամ գերմանացի ազգության պատկանող՝ կաթոլիկ դավանանքի ճանաչված մարդկանց: Հետագայի համար որոշում ենք, որ Կամենեցի ուսումիստները չընդունեն զինվորական ծառայության քաղաքացիների կամ արվարձանների բնակիչների, հակառակ դեպքում նրանք կպատվեն»:

Հայտնի է, որ Կամենեց քաղաքի և արվարձանների բնակչության ճնշող մեծամասնությունը բաղկացած էր ուկրաինացիներից ու հայերից: Ուստի և պարզ է, որ լեհական իշխանություններն ստիպված էին գիմելու այսպիսի միջոցառումների սոսկ այն պատճառով, որ տեղի ուկրաինացիներն ու հայերը ակտիվ մասնակցում էին 1648—1654 թթ. և հետագա տարիների ազատագրական պատերազմներին:

Սկզբնաղբյուրներում պահպանված ազոտ տվյալների հիման վրա, Կամենեց քաղաքի պատմության վերը վկայակոչված հեղինակը հայտնում է, որ կազակային պատերազմների խառն ժամանակներում «հավատարիմ հպատակության» դեմ հայերի գործած հանցանքների կապակցությամբ, նրանց նկատմամբ առաջ քաշվեցին ինչ որ մեղադրանքներ²:

Ուկրաինայի աջաինյա երկրամասերը 1648—1654 թթ. պատերազմով չգտան իրենց ազատությունը:

Տեղական աղգարնակչության պայքարը լեհական տիրակալության դեմ շարունակվեց նաև հետագա տարիներին: Կամենեցի լեհական կայազորը միշտ էլ իրեն զգում էր թշնամիների շրջապատում և լավ գիտակցում էր, որ կազակների արշավանքի դեպքում քաղաքի հիմնական բնակչությունը օժանդակելու և համագործակցելու է նրանց հետ:

Այս մասին ուշագրավ են Ա. Պիգուլի գիտողությունները:

Ինչպես արդեն առիթ ունեցանք նշելու, 1666 թվականին Հայոց արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչը, կաթոլիկ քարոզիչների քննեցությունից անմիջապես հետո:

¹ Город Каменец-Подольск, стр. 92.

² Նույն տեղում, էջ 92-93:

³ Նույն տեղում, էջ 215:

գալիս է Կամենեց, այստեղ ևս եկեղեցական Ունիան իրագործելու մտադրությամբ: Վատիկանի ազենտներն իրենց հետ բերում էին արքունական հատուկ հրովարտակ, որով կարգադրություն էր արվում Կամենեցի ամրոցապետին՝ պահապաններ և զորական ուժեր տրամադրել այդ տխրահռչակ Շառաքյալներին», «եթէ խոսովութիւն ինչ ծագեսցի»:

Երբ անհրաժեշտ եղավ ժողովրդին հնազանդեցնելու համար գիմելու ամրոցապետ զորքերի միջամտությանը, ամրոցապետի օգնականը, ինքն անձամբ գալով արքեպիսկոպոսի մոտ, խորհուրդ տվեց ցուցարներել մեծ զգառություն և չվրդովեցնել քաղաքի հայերին, «որոց ի ձեռս նոցա է քաղաքն Կամենեց, քաղաք կարևոր, աւար պատուական համարեալ առ օտարս»: Լեհ բնակչության թիվը քաղաքում փոքր է, ասում էր հրամանատարը, իսկ ուկրաինացիների վրա հույս դնել անհնարին է, այլ Շրնդ-հակառակն սմին ի ժամ պաշարման հարկ է հսկել ի վերայ տանց նոցա, զի մի մուծցեն զթշնամին ի ներքս ի քաղաքն»¹:

Անշուշտ, տրամագծորեն հակադիր դիրքորոշման մեջ էին ուկրաինացիների ազատագրական պատերազմների շրջանում ուկրաինահայ զաղթավայրերի շահագործող վերնախավերը: Նրանք, սերտ համագործակցելով լեհական մագնատների ու շլյախտայի հետ, մասնակցում էին ուկրաինացի և համազգի աշխատավորների շահագործմանը, և բնականաբար, թշնամաբար էին վերաբերվելու ազատագրական շարժմանը:

Այս խավի մտորումներն ու դիրքորոշումը արտահայտողներից է ոմն պարոն Քրիշթոֆ Մուստաֆայի որդի, պան Միսքոյի եղբայր Վարդերեսը: Նա, 1654 թ. ընդօրինակած ժամագրքի հիշատակարանում, իր ժամանակաշրջանը բնորոշում է՝ «դառն և տրտում, վշտալից և թշվառական» խոսքերով: Նրա «սիրտը նեղացած է», «լեարդը այրված», որովհետև Բոգդան Խմելնիցիին (Բոգդանին նա կոչում է Շլոկտան) այսինքն՝ «ոչ աստվածատուր» երկու տարի է ինչ պաշարել է Շաշխարհա Իլախաց՝ զքաղաքս, զգիւղս, զգաւառս, զգիւղաքաղաքս» և այլն²:

Ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարի նման գնահատականը՝ «պարոնների» ու «պանների» գնահատականն էր: Բնչպես տեսանք ուկրաինահայ զաղթավայրերի բնակչության, մեծամասնությունը ոչ միայն համակրանքով էր վերաբերվում իր նոր հայրենիքի ազատագրական ջանքերին, այլև ակտիվորեն մասնակցում էր դրան:

4

«Իր բախտը առհավիտ կապելով եղբայրական ոուս ժողովրդի հետ, ուկրաինական ժողովուրդը իրեն փրկեց օտարերկրյա ստրկացումից և ապահովեց իր ազգային զարգացման հնարավորությունը: Դրա հետ մեկտեղ Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ շատ բանով նպաստեց Ռուսական պետության ամրապնդմանը և նրա միջազգային հեղինակության բարձրացմանը»³:

Ռուսական պետությունը XVII դարի կեսերից միջազգային հարաբե-

¹ «Բոնի միութիւն», էջ 72:

² «Կամենից», էջ 190—191:

³ «Խեղիսներ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի մասին (1654—1954)» («Աղիտատորի բլոկնոտ», 1954, № 2, էջ 2):

րություններն ասպարեզ մտավ որպես հզոր մի պետություն, որն ի վիճակի էր ոչ միայն պաշտպանելու իր շահերն ու իրավունքները, այլև պատրաստ էր օգնության ձեռք կարկառելու օտար լծի տակ կեղեքվող բոլոր այն ժողովուրդներին, որոնք իրենց ազատագրության հույսերի ու ջանքերի իրականացումը կապում էին ռուսական պետության օժանդակության հետ:

Այգալիսի ժողովուրդներն առաջին շարքերումն էր գտնվում բազմաշարժար հայ ժողովուրդը:

Հայաստանի ազատագրության գործի կազմակերպիչներն աչալուրջ հետևում էին Հյուսիսային հզոր պետության առաջընթացին ու հաջողություններին: Ուկրաինահայ գաղթավայրերի հետ աշխույժ կապեր ունենալով, նրանց քաջ հայտնի էր, որ ուկրաինական ժողովրդի ազատագրական պայքարի հաջողությունը մեծ չափով պայմանավորված էր ռուսական պետության օգնությամբ, ուստի հայ եկեղեցու նշանավոր գործիչներից մեկը՝ Հակոբ կաթողիկոս Զուղայեցին (1655—1680), Ուկրաինայի ազատագրումից քիչ հետո (հավանաբար 1673 թ.) հատուկ խնդրագիր է ուղարկում Ալեքսեյ Միխայլովիչ թագավորին:

Խնդրագրի մեջ կաթողիկոսը նկարագրում է հայ ժողովրդի թշվառ ու տաժանելի վիճակը պարսկական հարստահարիչների տիրապետության տակ:

«Պարսկական պաշտոնյաները, — գրում է նա, — դրել են մեր և մեր եկեղեցու վրա ծանրագույն հարկեր, և մեզ, որ խեղճության ու աղքատության պատճառով անկարող ենք վճարել այդ հարկերը՝ նետում են բանտ, չարչարում ու տանջում, և վերջապես, ստիպում են ընդունել իրենց հավատը, մի բան, որ հանդիսանում է մահմեդական (իշխողների) վերջնական ու զլխավոր նպատակը»¹:

Կաթողիկոսը, առաջին անգամ լինելով, դիմում է ռուսական ցարի օգնությանը: Խնդրում է կարգադրել Պարսկաստան առաքվող ռուս դիպլոմատներին՝ ներգործել Պարսկաստանի վրա, արգելք հանդիսանալ հայ ժողովրդի անօրինակ կեղեքմանը: Նա վստահ է այգալիսի միջամտության դրական արդյունքների նկատմամբ, որովհետև քաջ տեղյակ է, որ ռուսական իշխանությունը պարսիկների աչքում մեծ նշանակություն ունի»:

Հակոբ Զուղայեցու այս ուշագրավ խնդրագիրը գրված է լատիներեն լեզվով: «Армяно-русские отношения в XVII веке» փաստաթղթերի ժողովածուի կազմողները (Վ. Պարսամյան, Վ. Ոսկանյան, Ս. Տեր-Ավակիմով), իրականաբար իրավունք ունենալով, եղրակացրել են, որ խնդրագիրը շարադրած պետք է լինի նշանավոր եկեղեցական ու կուլտուրական գործիչ, լատինագետ Ստեփանոս Լեհացին²:

Արժե համառոտակի ծանոթանալ այս անձնավորության գործունեության հետ:

1646 թվականին Ստեփանոսի ծնողները, որ Լվովի հայ գաղութում

¹ Армяно-русские отношения в XVII веке, сборник документов, подготовили к печати В. А. Парсамян, В. К. Восканян, С. А. Тер-Авакимова, Ереван, 1953, стр. 257.

Փաստաթուղթը հրատարակված է լատիներեն ընդգրկված և ռուսերեն թարգմանություններով: Մեջ բերված հատվածի հայերեն թարգմանությունը մերն է:

² Նույն տեղում, էջ 258:

³ Նույն տեղում, էջ 251:

ազդեցիկ դիրք ունեին, տեսնելով կաթոլիկների ոտնձգությունները և հայերին բռնի կաթոլիկացման նրանց ձգտումները, Լվովից էջմիածին են ուղարկում իրենց երիտասարդ որդուն, որը սովորել էր լատինական դպրոցում և տեղյակ էր քերականական ու փիլիսոփայական գիտություններին:

Այս մասին Առ. Դավրիժեցին գրում է. «Եւ ի ժամանակին՝ յորում Նիկոլ եպիսկոպոսն Իլովայ նեղէր և վտանգէր զհայազուն ժողովուրդսն՝ որ յԻլով էին, ծնողք Ստեփաննոսին՝ վասն բարեպաշտութեան և վասն ուղղափառութեան, հանեալ զսա յԻլովայ՝ առաքեցին ի սուրբ աթոռն էջմիածին, ի ժամանակս Փիլիպպոս կաթողիկոսին»¹:

Նա հայերեն չգիտեր: Կարճ ժամանակում սովորում է ռուսերեն և զգիր հայոց, և մի շարք արժեքավոր գրքեր է թարգմանում լատիներեն և լեհերեն լեզուներից (այս մասին քիչ հետո):

Կաթոլիկ պրոպագանդայի գործակալ Ա. Պիդուն, անգուսպ ատելությամբ լցված Ստեփանոսի հանդեպ, կոչում է նրան շփու մոլորեցուցիչ, բայց ստիպված է արձանագրելու, որ Հայաստանում նրա հոչակն այնքան էր տարածված, որ Վերըն զերկրորդ ոմն Բարսեղ (Կեսարացի) ունէին գնաւ:

Ստեփանոսը էջմիածնից շարունակում է ակտիվ մասնակցել Ուկրաինայի հայերի կաթոլիկների դեմ մղած պայքարին: Իր եղբորորդուն՝ Թեոֆորոս Վարդանուիչին նա էջմիածնում դաստիարակելուց հետո, արքեպիսկոպոս ձեռնադրել տալով՝ ուղարկում է Լվով՝ Նիկոլի դեմ պայքարելու և Ունիայի գործը տապալելու մտադրությամբ: Էջմիածնի հայ հոգևորականությունը Ստեփանոսի միջոցով (որն իր կապերը չէր խզում ուկրաինահայ գաղթավայրերի հետ) հնարավորություն ուներ հետևելու ուկրաինական ժողովրդի աղատագրական պայքարի ընթացքին և տեղեկանալու այդ պայքարի հաջող ավարտման գործում ուսական պետություն կառավարած խոշոր դերի մասին:

Այսպիսով, Ալեքսեյ Միխայլովիչին հուսցեագրված վերոհիշյալ խնդրագիրը, մի կարևոր փաստաթուղթ է, որի շարադրման հանգամանքները սերտ աղիւրսի մեջ են մտնում ուկրաինական ժողովրդի հետ միասին պանական Լեհաստանի ճորտատիրական լծի դեմ պայքարող հայկական գաղթավայրերի աշխատավոր խավերի պայքարի և ձգտումների հետ:

5

Ուկրաինայում իրենց երկրորդ հայրենիքը գտած հայերը, պայքար մղելով լեհ ասիմիլյատորների և Վատիկանի ագենտների դեմ՝ հանուն ազգային իրենց տրագիդիաների ու կոլլոտուրայի պահպանման, ուկրաինական ժողովրդի մղած ազատագրական պայքարի ժամանակաշրջանում ստեղծեցին նաև կոլլոտուրական նոր արժեքներ, զարկ տվեցին ուսումնական գործին, բազմացրին հայրենի երկրից իրենց հետ բերած բազմաթիվանդակ ձեռագրեր և այլն:

Համառոտ ակնարկով ծանոթանանք նրանց կոլլոտուրական կյանքի հետ:

Ուկրաինայի քաղաքներում բնակություն հաստատած հայերը, տա-

¹ Առ. Դավրիժեցի, էջ 314:

րագրվելով հայրենի երկրից, իրենց հետ բերել էին նախ և առաջ գարերի ընթացքում ժողովրդի կողմից ստեղծված ու մշակված ժողովրդական բանահյուսության հիանալի ստեղծագործություններ:

Այդ ստեղծագործությունները թարմ էին մնացել նաև Ղրիմի հայ գաղթավայրերի բնակչության հիշողության մեջ, և այս կամ այն առիթով՝ գրանցվում էին զրիմարնակ հայ գրիչների կողմից իրենց ընդօրինակած ձեռագրերի էջերում:

Ուկրաինահայ գաղթավայրերում գրանցված հայկական ժողովրդական երգերի քանակը շատ սահմանափակ է: Այնուամենայնիվ, մեզ հասած սակավաթիվ բանահյուսական փշրանքներն իսկ վկայում են նրանց գոյության և լայն տարածման մասին:

Սիմեոն Զամոստիեցին, օրինակ, իր «Ուղեգրության» մեջ, մի քանի անգամ հոգեկան իր ծանր ապրումները արտահայտելու համար գրում է ժողովրդական անվուգական հայրեններին, և գրանցում է նրանցից որոշ քառյակներ:

1611 թ. Հոռոմում եղած ժամանակ, գտնվելով անմխիթար վիճակում, նա հիշում է իր հարազատներին և գրանցում հետևյալը.

«Իմ տէր և ստեղծող աստուած
Ամենից ես զու ողորմած,
Բսկ ես վասն էր եմ անկած
Ի ի օտար աշխարհ վտարած:
Ամէնքն են իւր տեղ նստած
Մեծամեծ փառաց են հասած,
Իսկ ես ամէնէն զրկած,
Խիստ ողորմ, սիրելեաց դատած...» և այլն¹:

Մի այլ առիթով նա գրանցում է իր բազուկներին միայն ապավինած հազարավոր հայ պանդուխտների մտորումների արդյունք հանդիսացող, սոցիալական խորն բովանդակությամբ հետևյալ քառյակը.

«Յաշխարհս ես ի շուրջ եկի
Ձի գտայ սրտով սիրելի.
Զխելքուկս ի վրայ բերի.
Իմ բազուկս էր իմ սիրելի»:

Կասկած չի կարող լինել այն մասին, որ Սիմեոնը միայնակ չէր: Հայկական ժողովրդական երգերի գիտակների ու սիրողների թիվը անսահմանափակ էր Ուկրաինայի հայկական գաղթավայրերում: Այդպիսիներից էր նաև պապական դպրանոցի աշակերտներից 18-ամյա Հովհաննես Բարթոսովիչը և ուրիշները²:

Ուկրաինահայ գաղթականներն իրենց հայրենիքից բերել էին նաև հարյուրավոր մեծարժեք ձեռագրեր, փրկիսոփայական, քերականական, գիտական և այլ բովանդակությամբ, զարդարված գունագեղ ու անվուգական մանրանկարներով: Այդ ձեռագրերը հետագայում ուկրաինահայ ճարտար գրիչների կողմից բազմացվում են և հայրենի երկրից, հատկապես Կիևի կիսից, բերվում են նոր մեծարժեք ձեռագիր գրքեր:

¹ ՀԱ, 1933, էջ 482:

² ՀԱ, 1935, էջ 89:

³ «ԲՈՆԻ ՄԻՈՒԹԻՒՆ», էջ 119:

Այսպես, օրինակ, 1379 թվականին Կոստանդին կաթողիկոսի կարգադրությամբ Լվովից Սիս է մեկնում Հովհաննես քահանան, և ձեռնադրվելով արքեպիսկոպոս Վառնայի Ըոսաց աշխարհին և Վլախաց՝ վերադառնում է Լվով։ Նա իր հետ բերում է ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն Սաղմոսաց» աշխատության մի ընտիր ընդօրինակութիւն՝ «Մեծ նվերք աշխարհիս Ըոսաց» (այսպես է գրված հիշատակարանում)¹։

1616 թվականին Լվովում հիմնվում է նաև հայկական տպարան, որը, սակայն, կարճատև կյանք է ունենում, այստեղ լույս են ընծայվում մի Սաղմոս և րժշկական-աղթարսկան գիրք։

Հետաքրքրական է Ասղմոսի հիշատակարանը, ուր գրված է.

«Ամենակարօղ զօրութեամբն աստուծոյ կազմեցաւ նոր տպագիրս երկիրն Ռախաց քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ ննջման սուրբ Աստուածածնին, ձեռամբ յոքնամեղ Դարմատանեէնց Յովհաննէս երիցոս, զորս հոգս արեալ մեծաւ աշխատութեամբ և բազում ծախիւք տարի մի բոլոր արուեստաւորաց հետ դատեցայ մինչև գիրն ի գլուխ հանի և նոր կազմարան սահմանեցի» և այլն²։

Ուկրաինահայ գաղթավայրերի եկեղեցիներում և մասնավոր մարդկանց մոտ պահվում էին մեծ քանակությամբ ձեռագիր և տպագիր գրքեր։

Վրթանես վարդապետ Սոնկեցին, որ երկար ժամանակ ապրել է Մոլդավիայի Սուչավա քաղաքում, ապա՝ 1567 թվականից դարձել է Կաֆայի (Թեոդոսիա) եպիսկոպոս, հատուկ մի բանաստեղծությամբ պախարակում է այն մեծատուն մարդկանց, որոնք սեփական ձեռագրեր ունեն և չեն թույլ տալիս ուրիշներին օգտվել դրանցից։ Բանաստեղծության վերնագրում գրված է. «Ոմն մեծատուն ունէր Քարոզգիրք, մեկնիչ Արարածոց՝ ոսկիապատ և գեղեցիկ, ոչ գիտէր գիր և ոչ կարդալ, և ոչ տայր մարդոյ կարդալ, որ ուսանէին», այս կոնկրետ դեպքն առիթ է հանդիսացել շատ գեղեցիկ այդ բանաստեղծության հորինման, որի մեջ հեղինակը լայն ընդհանրացումներ է անում. Նա գրում է.

«Մէկ մարդ մի ճրագ է վառեր
Բարձր ի տեղ դրեր,
Մէկ մի խիստ յիմար եղեր,
Ըղճրագն ի վայր է առեր,
Տարեր սունտուկն է դրեր,
Ըղնորին լոյսն էր արգիւեր,
Վայ այն մարդոյն հոգոյն,
Որ ըզլոյսն առեալ թաղուցեր։

* * * * *
Մէկ մի աստուծոյ համար
Լեռնէն աղբիւր է բերեր,
Մէկ մի չարութիւն արեր,
Գնացել աղբիւրն արգիւեր,
Շատոնք ծարաւած թողեր,
Ծարաւուն բազումք են մեռեր,
Վայ այն մարդուն հոգւոյն և զխոյն,
Որ արեան պարտաւոր է եղեր»։

¹ Ժ. Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, 1930, էջ 129։

² Մ. Բժեկյան, էջ 99—100։

³ Ն. Ակիմյան, Հինդ պանդուխտ տաղասացներ, 1921, Վիեննա, էջ 31։

Հեղինակի կարծիքով համահավասար մեղք են գործում նաև նրանք, որոնք գրվանի տակ են պահում գրքերն ու արգելում ուրիշներին կարգալ գրանք-

Իհարկե, ոչ ընդամենը գրքատերերն են վարվել վերոհիշյալ մեծատան նման: Ընդհակառակը, շատերը բաղձալիվ ձեռագրեր են նվիրարներել եկեղեցիներին, որով և հնարավորություն են ստեղծել ավելի մեծ թվով ընթերցողների կարգալ և օգուտ քաղել այդ գրքերից: Այսպես, օրինակ, Կամենեցի սր. Նիկոլայոսի հայկական եկեղեցու նվիրարերությունների մատյանում 1616 թվականի տակ գրանցված է տվյալ այն մասին, որ եկեղեցին ոմն Խաչատուր ավագերեցից նվեր է ստացել 11 գիրք (10-ը ձեռագիր, 1-ը տպագիր)¹:

Անշուշտ, այսպիսի նվիրարերություններ արվում էին նաև ուրիշների կողմից և Ուկրաինայի հայկական եկեղեցիներին կից ստեղծվել էին արժեքավոր ձեռագրերով հարուստ գրադարաններ:

Այն բանից հետո, երբ լեհական իշխանությունները ղինական ուժի գործադրմամբ զավթեցին Լվովի հայկական եկեղեցիները և հանձնեցին գրանք կաթոլիկություն ընդունած Նիկոլ Թորոսովիչին՝ այդ եկեղեցիներում պահվող հայկական ձեռագրերը մեծ մասամբ թալանվեցին ընչաքաղց ու ապիկար եպիսկոպոսի կողմից և վաճառվեցին պատահական մարդկանց: Այս մասին ուշագրավ տվյալներ են հաղորդում մեղ ծանոթ Սիմեոնը իր 1636 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում և Առաքել Դավրիժեցին իր «Պատմություն» մեջ:

Իրանցից առաջինը Նիկոլի կողմից կողոպտված ձեռագրերը թվարկում է այսպես՝ «...Արծաթապատ ոսկրակալմ մագաղաթ ոսկեգիր բազում աւետարանս և յոլով շարակնոցս, ոսկով և լազվարդով նկարեալ պատուական պատկերս, և Ի (Ճ).—ԳՃ. (200—300) ազնիւ գրեանս վարդապետականս՝ ի թագաւորական խաղնայէ ի դուրս ելած, մանաւանդ Սըսու և Քաֆայու, Բ.—Գ. (2—3) Աստուածաշունչք, այլ և մեկնիչք և քաղուածք, Փիլոն գիրք և Քարոզգիրք, Տօնականք, Սարգիս գիրք, Սաղմոսի մեկնիչք և Արարածոց մեկնիչք և այլ անթիւ ազնիւ գրեանք, նաև յոլով արտաքին գիրք, զորս ոչ կարեմ մի ըստ միսջէ գրել, զի ձանձրասցին լսողքն: Եւ զայն ամենայն վերոյգրեալ Մսրայ խաղինան՝ ի միում ամի կորոյս²»:

Առաքել Դավրիժեցու տվյալով Նիկոլի կողմից գրավված ձեռագրերը թվով ճաշակելի քան զհաղար փերթ (էին), ամենեքեան ընտիր և պատուականք և վարդապետականք³:

Այնուհետև Դավրիժեցին հաղորդում է, որ ճաշակում գրեանք և անօթք ի նորին վաճառելոցն եկին յերկիրս Հայոց՝ և առ մեզ հասին. զորս վաճառականք գնով առեալ բերին, որ սքանչելի էր տեսողացն³:

Այդ ձեռագրերից շատերը այժմ էլ պահվում են Հայկական ՍՍՌ Մի-նիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատունը (Մատենադարան) և շարունակում են հիացմունք պատճառել իրենց մանրանկարների գունագեղությամբ, գեղեցիկ ու համաչափ տառաձևերով, կազմերով և այլ արժանիքներով:

¹ Լ. Խաչիկյան, Նշ. աշխ., էջ 147:

² Մատենադարան, Ձեռագիր № 1004, էջ 193ա:

³ Առ. Դավրիժեցի, էջ 198:

Դրանցից էլ օրինակ, Մատենադարանի № 351 Աստվածաշունչը, որը նկարագարվել է 1619 թվականին՝ Ղազար Բարերգացին, Լվովում, Ղազար Բարերգացին ձեռքի տակ ունեցել է լվովցի փարիզարնակ հշանավոր նկարիչ և փորագրիչ Յիարնկոյի նկարագրված Աստվածաշունչը, և հետևելով նրա ոճին, հայկական եկեղեցական նկարչության մեջ ներմուծել է եվրոպական նկարչության որոշ տարրեր։ Ղազար Բարերգացու նկարագրված Աստվածաշունչը հետագայում տարածվեց շատ օրինակներով¹։

Ուկրաինահայ գաղթավայրերում որոշակի քայլեր են արվել նաև ուսումնական-գաղութական գործի զարգացման ուղղությամբ։ Սկզբում, ինչպես ամենուրեք Հայաստանում, կրթական գործը կենտրոնացված էր քահանաների ձեռքում, որոնք իրենց տանը գրագիտություն և կրոնական նախնական գիտելիքներ էին սովորեցնում մի քանի պատանիների, հատկապես իրենց աղգականներին, նրանց նախապատրաստելով հոգևոր կոչման։ XVI դարի վերջերից հայկական որոշ ընտանիքներ, գերազանցապես գաղթավայրերի հայկական վերնախավերից, իրենց պատանիներին ուսման են տալիս կաթոլիկական դանադան միսսիոնարներին (եզովիտներին, թեագինյաններին և այլն) կողմից բացված դպրոցներում, որտեղ ուսուցումը տարվում էր լատիներեն ու լեհերեն լեզուներով։ Այդ ճանապարհով կաթոլիկ պրոպագանդիստները հույս ունեին իրենց աղգեցությունը տարածել հայկական համայնքների վրա։ Սակայն շուտով, ուկրաինահայերը, գիտակցելով կաթոլիկական դպրոցների վնասակար աղգեցությունը իրենց պատանիներին վրա, եռանդուն քայլերի են դիմում հայկական դպրոցներ հիմնելու ուղղությամբ։

Որոշակի տեղեկություն է հասել մեզ այն մասին, որ XVII դարի սկզբին արդեն, Լվովում գործում էր հայկական դպրոց, ուր սովորում էին ավելի քան ութսուն պատանիներ։ Այս մասին կարևոր տվյալ է հաղորդում Սիմեոն Զամոստիեցին.

«Եւ կայր դպրոցն,— գրում է նա,— ավելի քան ութսուն տղայ, որք ուստնէին զանազան ուսմունս՝ զերաժշտական, քերական, առգանութիւն և արվեստ համարողական»։

Նման մի դպրոց բացվում է նաև Կամենեցում 1604 թվականին։ Դպրատան կառուցման վրա Կամենեցի հայերը ծախսում են 170 ֆլորին²։

Կրթական գործը Լվովում 1663 թվականին Նիկոլ Եպիսկոպոսի հաճությամբ իրենց ձեռքն է առնում Վատիկանի Հովատի ծավալման ժողովը, ուղարկելով Լվով կաթոլիցիզմի մոլի պրոպագանդիստ, հայագետի հոչակ վաստակած և հայերենին քաջ գիտակ Կղեմես Դալանոսին, իր փոխանորդ ու գործի շարունակող՝ Ա. Պիզուլի և մի սպասավորի ուղեկցությամբ։

Կ. Դալանոսի դպրոցի միակ նպատակն էր Վատիկանին հնազանդ կաթոլիցիզմի ոգով դաստիարակված հոգևորականներ պատրաստել ուկրաինահայ գաղթավայրերի եկեղեցիների համար։

Սկզբում, մեծ դժվարությամբ միայն, նրանց հաջողվում է հավաքել մի քանի աշակերտներ (ընդամենը 6—7 հոգի)։ Հայերը, գիտակցելով այդ

¹ «Արվեստը հայ գաղութների մեջ», ՀԱ, 1934, էջ 129։

² ՀԱ, 1935, էջ 163։

³ Մ. Բլեկյան, Նշ. աշխ., էջ 155։

նորարացի դպրոցի ուղղությունն ու նպատակները՝ հրաժարվում են իրենց որդիներին ուղարկել այնտեղ սովորելու:

Հայերի վստահությունը ձեռք բերելու գիտավորությունը նրանք լուրջ ուշադրություն են դարձնում նաև հայոց լեզվի ուսուցմանը:

1668 թվականին Կ. Գալանոսի հաջորդ Ա. Պիդուլի ձեռնարկությամբ այդ դպրոցի աշակերտները բեմադրում են Հոփսիմեի նահատակության մասին հայերեն լեզվով գրված և լեհերեն մեկնություններ ունեցող մի ողբերգություն: Դպրոցական այդ թատրոնի ներկայացումը գրավում է իրեն մեծաքանակ հանդիսատեսներ, այնքան, որ չլեզև հնար գորունս դպրանոցին պահելու՝ խոնկեցան ի ներքս բաղմունքիւն ժողովրդոց, այլադասք և այլասեռք, հետաքրքիր գոլով վասն անլուր տեսարանին ի մեջ Հայոց՝:

Ներկայացումը մեծ հաջողություն է ունենում, «Յնծուծեամբ կարի մեծաւ րնկալաւ զողբերգութիւնն քաղաքն համօրէն, լատինացիք ասեմ և հայք և ոռոսք հայտնում է Ա. Պիդուլն: Անհրաժեշտ է լինում ներկայացումը կրկնել 4 անգամ (1668 թ. ապրիլի 9-ին, 10-ին, 11-ին, 12-ին): Բեմադրության ձևավորումը նույնպես կատարում են աշակերտները, իսկ երաժշտական համարների կատարման համար վարձվում է նվագախումբ:

«Առ ի հաճել զմիտս ժողովրդեան», այսինքն հայերի սիրտը գրավելու մտադրությամբ, Ա. Պիդուլն մի այլ բեմադրություն էլ կազմակերպում է հաջորդ՝ 1669 թվականին: Այս անգամ բեմադրության նյութ է ընտրվում հայ եկեղեցու կողմից չընդունվող Դադկեղոնի ժողովի գումարման գործում մեծ դեր կատարած Պուլխերիա կայսրուհու վարքը: Ներկայացումը լատիններեն լեզվով էր, որոշ մասերի լեհերեն մեկնությամբ: Երկուդ կրելով դպրոցի խարխուլ շինության կործանումից, այս անգամ բեմադրությունը տեղի է ունենում բացօթյա՝ հայոց մայր եկեղեցու բակում²:

Այս երկու ներկայացումներն էլ, կազմակերպված լինելով կաթոլիկ քարոզիչների կողմից, հետապնդում էին բացորոշ կերպով մի նպատակ, այն է՝ նպաստել Ունիայի հակաժողովրդական գործին: Այնուամենայնիվ, դրանք, որոշակի նշանակություն ունեցան Լվովի հայկական գաղութի կուլտուրական կյանքում և մտան բաղմադարյան հայ թատրոնի պատմության մեջ, որպես նոր թատրոնի կազմակերպման ուղղությամբ կատարված առաջին քայլերից մեկը:

Յ

Ուկրաինայի հայերը XV–XVI դարերի ընթացքում պատմադրության ու զեղարվեստական ու գիտական գրականության բնագավառներում ևս ստեղծեցին որոշ արժեքներ, որոնք դուրս գալով գաղթավայրի սահմաններից՝ տարածվեցին ու ստացան լայն ժողովրդայնություն և հաստատուն կերպով տեղ գտան հայ ժողովրդի ստեղծած բաղմադարյան կուլտուրայի գանձարանում:

Ուկրաինահայ պատմագիրներն իրենց աշխատություններում պրանցել են բազմաթիվ ուշադրավ ու վստահելի տվյալներ, որոնք նպաստում

¹ «Բոնի միութիւն», էջ 203, նաև 250:

² Նույն տեղում, էջ 208, 250:

³ Георг Гюн, 2000 лет армянского театра, том II, Москва, 1952, стр. 374.

են նաև Ուկրաինայի, Ռուսաստանի, Լեհաստանի, ինչպես և հարևան այլ երկրների պատմության ուսումնասիրությանը:

Այդպիսի պատմական գրվածք է օրինակ՝ Հովհաննես Ավագերեցի «Տարեգիրք կամենիցայ» աշխատությունը¹:

Իր հիմնական մասով այն ընդգրկում է XVI դարի վերջի և XVII դարի սկզբի ժամանակաշրջանը: Այստեղ վստահելի տվյալներ են գրանցված Ջապորոժյան կազակների, թաթարների, թյուրքերի ու լեհերի դեմ մղած մարտերի, ռուս-լեհական հարարերությունների, պանական Լեհաստանի ճորտատիրական լծի տակ կեղեքվող ժողովուրդների վիճակի, Ուկրաինայի հայկական գաղթավայրերի ներքին կյանքի և բազմաթիվ այլ հետաքրքրական նյութերի մասին: Ծանոթանալով քանի գրանցումների հետ:

1563 թ., օրինակ, գրանցված է հետևյալ տվյալը. «Թվ. ՌԺԻ (1563) եկաւ Մոսքովի դնադն ի թապաւորի աշխարհն, և դոլոցքա քաղաքն էառ, ըստ ոչ իւրով կարողութեամբ, այլ ... ըստ ազգին ապստամբութեամբ. զոր նոքա ի մէջ բերդին հինգ վեց տեղ հրով այրեցին, և ապա ամենայն քաղաքն և բերդն շիւարեցան, և ինքեանք ետուն զբերդն թշնամեաց...»:

Նույն թվականի (1563) տակ հետաքրքրական տվյալներ են հաղորդվում Ջապորոժյան կազակների ղեկավարներից մեկի՝ Դիմիտրի Իվանովիչ Վիշնևեցկու՝ Մոլդավիա կատարած ինքնագլուխ և իր համար կորստաբեր արշավանքի մասին²:

1563 թվականի դեպքերի կապակցությամբ «Տարեգրության» հեղինակը վշտով արձանագրում է լեհ մագնատների բարքերի ապականությունը և նրանց անկարողությունը թշնամիներին դիմագրավելու. «Եւ իշխանքն և մեծամեծքն,—գրում է նա,—թուլասիրտ են դարձել և ձեռքն լքել և ծունկքն կիողեալք, մանաւանդ յուտել և ի ըմպել, և զմիմեանս սպանանել և զազրագործելն պատրաստագոյն են, քան զթշնամիսն հալածել և կամ կոտորել»:

1591 թվականի տակ գրանցված դեպքերից ուշագրավ է Ղրիմի թաթարների և ռուսական իշխանությունների միջև տեղի ունեցած պատերազմի մասին վկայությունը, որտեղ ասված է. «Թվ. ՌԽ. (1591 92) դաթարի խանն ինքն և եղբարքն իւր բազում զօրօք գնաց ի վերայ Մոսկովի երկրին և Մոսքովի գնեալն իւր հեծելով պատերազմեցաւ ընդ անօրէնսն և կոտորեաց զնոսա մինչև իսպառ. և էին թուով իրրե 100,000, ևս բաղումս կենդանի կալաւ...»:

Շատ կարևոր են նաև «Տարեգրության» մեջ, 1595—1596 թթ. գրանցված տվյալները՝ Ջապորոժյան կազակների խիզախ ղեկավարներից մեկի՝ Նալիվայկոյի մասին (այդ տվյալների հետ արդեն առիթ ունեցանք ծանոթանալու), ինչպես նաև կեղծ-Դիմիտրիի մասին տվյալները՝ գրանցված 1605 թվականի տակ:

Հովհաննես Ավագերեցի «Տարեգրությունը» գրված է հայերեն լիզովով: Շարունակությունը, որ գրանցված են 1611—1624 թթ. դեպքերը, շարադրել են նրա թոռներ Հակոբն ու Ալեքսեյը՝ թաթարերեն լիզովով, բայց

¹ Հրատ. Ղ. Ալիբաև, *Կամենից*, էջ 15—68:

² Նույն տեղում, էջ 32—33:

³ Նույն տեղում, էջ 33—34:

⁴ Նույն տեղում, էջ 37—38:

⁵ Նույն տեղում, էջ 38:

հայերեն այբուրենով: «Տարեգրություն» այս մասում հատկապես կարևոր են Յոցորայի և Խոտինի պատերազմների մասին եղած փաստաթղթերի գրանցումները:

Ոչ պակաս արժեքավոր պատմական գրվածք է մեր կողմից արդեն մեկ անգամ հիշատակված Հովհաննես Կամենեցու «Պատմություն պատերազմին Խոթինում» նորահայտ աշխատությունը:

Ուկրաինահայ պատմագրության մեջ ամենապատվավոր տեղը, սակայն, պատկանում է մի շարք աշխատությունների ու հիշատակարանների հեղինակ Սիմեոն Զամոստիեցուն:

Սիմեոնը ծնվել է 1584 թվականին: Նրա ծնողները գաղթել էին Ղրիմի Կաֆա (Թեոդոսիա) քաղաքից և հաստատվել Զամոստին (հայկական աղբյուրներում՝ Զամոսյա) նորաշեն քաղաքում:

Լինելով ուշիմ, հետաքրքրասեր և գիտություն ծարավ երիտասարդ, 1608 թվականին, իր սուղ միջոցներով, Սիմեոնը ձեռնարկում է հեռավոր ճանապարհորդության: Դուրս գալով Լվովից և 11 տարի (1608—1619 թթ.) շրջագայելով, նա այցելում է հետևյալ նշանավոր վայրերը (րերում ենք բոլոր հերթականությունը, առաջինը՝ նրա ճանապարհորդության ուղեգրի ծրագրով)՝ Կ. Պոլիս—Զմյուռնիա—Կ. Պոլիս—Վենետիկ—Հռոմ—Մուշ—Կ. Պոլիս—Կոնստանդնուպոլիս—Հալեպ—Կ. Պոլիս—Լվով:

Ուղեգրական իր հուշերի մեջ նա գրանցել է ստացած տպավորությունները այցելած քաղաքների տեսարժան վայրերի ու հուշարձանների, ժողովրդի տնտեսական դրությունը, նրանք ու կացի, զբաղմունքների մասին: Նրան հատկապես հետաքրքրում ու զբաղեցնում են իրենց հայրենիքից վտարված ու տարագիր հայերի հետ կապված տեղեկությունները: «Եւ թէ հաշուես ի Պուղտանայ մինչև Ստամպուլ, պուրուն Ուսումէլին մինչև մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, ղեղ կամ չֆուրիկ, որ հայ չկենայ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զփոշի»—գրում է նա, և հայերի մասին արժեքավոր դիտողություններով լցնում իր «Ուղեգրության» էջերը:

Հոտիսպետ արժեքավոր են նրա «Ուղեգրության» այն հատվածները, որոնք վերաբերում են ուկրաինահայ գաղթավայրերի (առաջին հերթին Լվովի) և թյուրքական լծի տակ կեղեքվող հայերի վիճակի մասին:

Թյուրքիայում հայերը, գրում է նա «յոյժ աղքատ և չքաւոր են, զի միշտ զրկեն, զզվեն, տուգեն, զրպարտեն և առաւել հարկ պահանջեն: Եթէ տասն որդի ունիցի ոք, ամենէն խարաճ առնուն... Ամեն տեղ հարամիք էին, սօխթանի, ամէն տեղ թալան և ետգմայ և դուրում»:

Սույն հոգվածի տարրեր մասերում, այլևայլ հարցերի կապակցությամբ, բազմիցս առիթ ունեցանք քաղվածքներ մեջ բերելու Սիմեոնի «Ուղեգրությունից», ինչպես և նրա «Վիպասանութիւն Նիկոլական» չափածո գրվածքից ու Մատենադարանի № 1004 ձեռագրի ընդարձակ հիշատակարանից:

Անտարակույս, Սիմեոնի գրվածքները, հատկապես նրա «Ուղեգրությունը», իր նշանակությամբ դուրս գալով ուկրաինահայ գաղթավայրերի

շրջանակներին, պատվավոր տեղ են գրավում XVII դարի հայ պատմագրության մեջ՝ ընդհանրապես:

XVII դարի հայ գրականության գործիչների շարքում ոչ պակաս պատվավոր տեղ է գրավում մեղ արգեն ծանոթ Ստեփանոս Լեհացին՝ իր բեղմնավոր թարգմանչական ու հասարակական գործունեությամբ:

1646 թվականին կաթողիկոսների դեմ պայքար ծավալելու համար Լվովից էջմիածին ուղարկված երիտասարդ Ստեփանոսը, ինչպես ասացինք, հայերեն չգիտեր: Կարճ ժամանակում, ջանասիրությամբ աշխատելով, նա խորտակեց ուսումնասիրում է իր մայրենի լեզուն և սկսում է լատիներեն ու լեհերեն լեզուներից թարգմանություններ կատարել: Նրա թարգմանած գրքերից են. 1) Հովսեփ Փլարիոսի, Պատմութիւն պատերազմին հրէիցք-ը, 2) Դիոնիսիոս Արիոպագացու աշխատությունները (հին հայկական գոյություն ունեցող թարգմանությունները նրան չեն գոհացնում), 3) Վերջ պատճառացք-ը, 4) Արիստոտելի Վետաֆիզիկան և 5) Հայելի վարուցք-ը և այլն:

Ժամանակակիցները սիրով են ընդունում հատկապես Հայելի վարուցք-ի թարգմանությունը: Վե՛րջ յոյժ համեղ և ախորժ են բանք այս գրոյսը, գրում է այդ մասին Առաքել Դավրիժեցին¹:

Թարգմանությունը, ըստ Լեռնոյթին, կատարված է Սիմեոն Վիսոցկու 1633-ին լատիներենից լեհերեն կատարած թարգմանությունից (Великое Зерцало). 1660 թվականին, Լեհերեն բնագիրը, 7 տարի հետո, Ալեքսեյ Միխայլովիչի հրամանով թարգմանվում է նաև ռուսերենի:

Հայելի վարուցք-ի մեջ եղող զվարճալի ու գրավիչ առակներից շատերը, այդ ժողովածուի միջնորդությամբ, մուտք են գործում Վարդան Այգեկցու անունով հայտնի ձեռագիր առակագրքի մեջ, այդտեղից թարգմանվում են արաբերենի և այլն: Դրանցից շատերը տարածվում են ժողովրդի մեջ՝ նաև բերանացի կերպով և նույնիսկ մինչև մեր օրերը պատմվում են, որպես հայկական ժողովրդական առակներ², Այսպիսիներից է, օրինակ, այն նախանձոտի առակը, որը գերադասում է որևէ նվեր ստանալուց՝ զրկվել իր մի աչքից, որպեսզի իր ընկերը զրկվի երկուսից:

Հանրահայտ է նաև համառ կնոջ մասին զվարճալի առակը, որը բերում ենք ստորև ամբողջությամբ.

Վե՛րջ ունի ընդ կնոջ իւրում երթայր երբեմն ընդ արտորայս և ասէ զնա՝ տեսանես զիարդ գեղեցկապէս և պատշաճարար արտս հնձեալ է, և կինն ընդգիմարար ասէ՝ ոչ է հնձեալ, այլ խուզեալ, հակառակ կալով բանից առն իւրոյ: Եւ յորժամ այրն ասէր թէ հնձեալ է և կինն ասէր թէ խուզեալ է, բարկացեալ այրն՝ ընկեց զնա ի ջուրն: Արդ, իրրե ոչ կարաց խօսիլ՝ եհան զձեռն ի ջրոյն՝ նշան տալով մատամբ ի կերպ մկրատից ուցանելով մինչև ի մահ, թէ արտն խուզեալ էք³:

Եման առակներ Հայելի վարուցք-ում շատ կան:

Իր գործունեության առաջին շրջանով XVII դարի մեջ է մտնում նաև Կամենեցի ավագներից Ստեփանոս Թոշթան (ծնվ. 1670): Նա գրել է մի ժամանակագրություն՝ ուկրաինահայ գաղթավայրերի պատմության

¹ Առ. Դավրիժեցի. էջ 316:

² Այս մասին կարևոր տվյալներ է հաղորդում Գալուստ Տեր-Մկրտչյանը, իր «Հայկական բա-ի ԺԳ—ԺԹ. հոգվածներում (Վաղարշապատ, 1899):

³ Նույն տեղում, էջ 34:

հիշարժան դեպքերի մասին ուշագրավ տվյալներով (ընդգրկում է 1350—1736 թթ. ժամանակաշրջանը)¹, ինչպես նաև ընդարձակ ու բազմաճյուղ մի րառարան հայ-լատին լեզվի, տրամաբանության մասին մի աշխատություն, «Բարոյական աստուածաբանություն» և այլ գործեր²։

7

Ուկրաինահայ գաղթավայրերում հաստատված հայերն իրենց լուծման մոտեցել են նաև միջնադարյան հայկական պոեզիայի գանձարանը։ XVI—XVII դարերում այնտեղ ապրել ու ստեղծագործել են Պարսամ Տրապիզոնցի, Մինաս Թոխաթեցի, Հակոբ Թոխաթեցի, Ղազար Թոխաթեցի տաղասացները։ Դրանցից վերջին երկուսը ապաստանել էին Ուկրաինայի հայկական գաղթավայրերում 1599—1602 թթ. հետո, երբ ջալալիների ապստամբության ժամանակ ավերվեց Թոխաթ շեն ու հայաշատ քաղաքը։

Ուկրաինահայ բանաստեղծները հայ միջնադարյան պոեզիայի մեջ առաջիններից էին, որ զավեշտական, կատակային ժանրի բանաստեղծություններ հորինեցին։

Համառոտակի ծանոթանանք վերոհիշյալ տաղասացների ստեղծագործությունների հետ։

Պարսամ Տրապիզոնցին 1578—1582 թթ. հիշվում է որպես Լվովի եպիսկոպոս։ Նրա ստեղծագործություններից մեկ հասել է միայն մի կատակերգ, ցավոք ատամի մասին՝ «Տաղ վասն ակռայի, զոր ասացեալ է Պարսամ Տրապիզոնցի» խորագրով։

Ատամնացավից հեղինակը տառապում է, նա քաղցած է, երազում է համադամ կերակուրներ՝ իր սովատանջ որովայնը հագեցնելու համար։ Սակայն ատամնացավը հոգի է հանում և նրա ուտելու ցանկությունը մնում է սոսկ որպես անիրագործելի երազանք։ Բանաստեղծության մեջ, քիչ ձգձգված ու ոչ կատարյալ քառյակներով հաջորդում են միմյանց ցավի ու ցանկության մեկը մյուսին ժխտող զգացումները։

«Ակռայեկս հալ մի չունի,
կու խոցոտէ յիս, չի մնաց հոգի,
Թէ տամ քաշել, նա կու ցաւի,
Դուք ինչ խրրատ կու տաք ինձի։
Հոգիս կելնայ հետ չոր հացի,
Հաւաս չունիմ ես չոր մըսի,
Ջետ որ ի յակռաս կու հասնի,
Այլ չի մընայ ի յիս հոգի...»։

Այսպիսի տողերով է սկսում իր տաղը Պարսամ Տրապիզոնցին³։

Շատ ավելի բազմաբղջուն ու ճաշակավոր հեղինակ է Մինաս Թոխաթեցին (1510—1621⁴)։ Որը երկար տարիներ գրագրի պաշտոնն է վարել Լվովի հայկական դատարանում։

Իր նախորդի նման, նա ևս սիրում է կատակներ անել։ Նրա «Դուլա-

¹ Ժամանակագրությունից քաղված խոսքեր է հրատարակել Դ. Ալիշանը «Կամենիցում», էջ 131—146։

² Տես Գ. Ջադպիսանյան, Պատմություն հայերէն գլրութեան, Բ. Նոր մատենագրություն, Վենետիկ, 1878, էջ 765։

³ ՀԱ, 1030, էջ 504—506։

սանք հերիսի» խորագրով զավեշտական ոտանավորը հայ միջնադարյան գրականության մեջ այդ ժանրի ամենահաջող երգերից է:

1563 թ. բարիկենդանի օրերին հեղինակը հարիսայի կարոտից հիվանդացած ընկել է մահի՝ Իմանալով Մինասի Վերականգնության» պատճառը, Լվովի արքեպիսկոպոս Իրիգոր Վանեցին նամակ է գրում նրան և հրավիրում է իր մոտ հարիսա ուտելու:

«Յանկարծակի զդուռն րացին

Ձմռան ճամակն ի յիս տըլին», գրում է նա:

Կարգավով նամակը հեղինակի մարմնով դող է անցնում,

«Յանկարծ շուտով առողջացաւ,

Հոգւով մարմնով ուրախացաւ,

Երբ հերիսի խապար հասաւ»:

Բանաստեղծության շարունակության մեջ նա, ցնծագին տրամագրումը, հարիսայի գովքն է անում, համարում է այն «Իրիգոր Լուսավորչի ստեղծած կերակուր և այլն և այլն»:

Մինաս Թոխաթեցու գլուխ գործոցը, սակայն, Միգրի վերայ Օլախաց երկրին հայերուն» ուշագրավ ստեղծագործությունն է:

Օլախաց երկրում (Մոլդավիա), հատկապես Սուչավա քաղաքում, XIII դարից սկսած բնակություն էին հաստատել բազմաթիվ հայեր: 1551 թվականին Ստեփանոս Ռարեշ իշխանը պահանջում է հայերից հավատափոխություն, փակել է տալիս Սուչավայի, Պոթուշանի, Ռոմանի, Եաշի և այլ վայրերի հայկական եկեղեցիները, հափշտակում է դրանց գույքը, այրում է հարյուրավոր մեծարժեք ձեռագրեր և այլն: Մինաս Թոխաթեցու Միգրը վերաբերում է այս դեպքերին և գեղարվեստական արժանիքներից բացի, ունի նաև պատմական նշանակություն: Մինասից մեզ հասել են նաև մի քանի այլ չափածո ստեղծագործություններ:

Մինասի հայրենակից Հակոբ երեց Թոխաթեցին (1573—1680), իր ընտանիքով հանդերձ, ճաշակեց հայրենի քաղաքի կործանման և բնակչության գերեվարման ու սրատման ողջ սարսափները, և 1602 թվականին իր խարիսխը ձգեց Ջամոստիե քաղաքում, որպես տեղի հայկական դադթի քահանա: Այստեղ նա ծավալեց գրական ու թարգմանչական բեղմնավոր գործունեություն և ընդօրինակեց բազմաթիվ ձեռագրեր:

Նրա չափածո ստեղծագործություններից ուշագրավ են հատկապես երկու Միգրերը, առաջինը՝ նվիրված հայրենի Թոխաթ քաղաքի ավերմանը՝ Դելի-Հասան Ջալալիի կողմից (Միգրի վերայ Եւդոկիա քաղաքին, որ այժմ ասի Թոխաթ, զոր ուսն անօրէն Տելու-Հասան ասեն, որ եկաւ այրեաց և աւերեաց զաշխարհ»), երկրորդը՝ նվիրված 1593—1595 թթ. Մոլդավիայի քաղաքական անցուղարձերին (Միգրի վերայ Օլախաց երկրին):

Այս վերջին՝ պատմական բովանդակությամբ ողբի մեջ, կարևոր ու փատահելի տեղեկություններ են պահպանվել կազակների մասին: Մոլդավիայի Ահարոն վոյեվոդան բանակցում է կազակների հետման Լուպատայի

¹ Ն. Ակիմյան, հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 102—111 (տես նաև էջ 72—73):

հետ, միազյալ ուժերով թյուրքերի դեմ դուրս գալու նպատակով: Ըստ պայմանավորվածության կազակները գալիս են Մոլդավիա: Սակայն Ահարոնը փոխում է իր մտադրությունը և որոշում է կովել կազակների դեմ: Մոլդավական ու կազակական զորքերը բախվում են իրար. Եաշ (Յասսի) քաղաքը գրավվում է կազակների կողմից: Քաղաքի հայ բնակչությունը խիստ տուժում է պատերազմական գործողություններից և այլն:

Ահա պատմական այս եղելությունների ֆարուլայով Հակոբ Թոխաթեցին հորինել է իր լավագույն ստեղծագործություններից մեկը՝ «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» խորագրով:

Ծանոթանանք ոգրի արժեքավոր ու գեղեցիկ սկզբնավորության հետ.

«Լայով ասեմ ողբերգական
Արտասուցով հառաչական
Այս անողորմ բանքս որ եղան
Ի մեր մեղացն զործեցան:
Ի թվին Հայոց հազար ամին
Քառասուն և երեք աւելորդին (1594)
Չար վայվոտայ մի յայտնեցաւ
Այս Աւլախաց փոքրիկ երկրին:
Քորհուրդ արաւ ի իւր մտին,
Ասաց՝ ցարդեմ զազգրն տաճկին.
Հրեշտակ առաքեաց Լոպոտին՝
Ղաղախներուն գլխաւորին.
Ասաց՝ եկեք ի յիմ երկրին,
Հետ ձեզ երթամք վերայ թուրքին,
Որ պաշարեմք ըզքաղաքնին,
Սւ տէր լինինք նոցա երկրին:
Ղաղախներուն սլարոնին,
Որ Լոպոտայ անուանէին,
Հաճոյ թուեցաւ յաչրս նորին,
Շատ հեծելով ելան եկին:
Երբ յերկիրն Աւլախին մրտին,
Ի Ցոցառան եկան հասին,
Բանակեցան ամենևին
Ի Ցոցոռայ ջրբեղերին:
Դադաք մի կայր որ խիստ շէն էր,
Անուն նորա, Եաշ պաղար էր,
Պեղծ վոյվոտան հօն բնակեր,
Ցոցոռային նա ի մօտ էր:
Չար վոյվոտան օլախ աղղին
Ասաց՝ չեմ կռուիր ես հետ թուրքին,
Ես կու կըրուիմ հետ զաղախնին,
Սւ կոտորեմ զամենեւին...»:

Այնուհետև նկարագրվում է մոլդավացիների ու կազակների կռիվը, որում հաղթանակած կազակները՝ ի պատասխան մոլդավացիների նենգություն, թալանում են Եաշ քաղաքը և այլն:

Որքան էլ կարևոր են բովանդակությամբ ու գեղեցիկ են իրենց պոետական արժանիքներով Հակոբ Թոխաթեցու «Ողբերը», այնուամենայնիվ,

նա իր համեստ տեղը գրավեց հայ միջնադարյան գրականության մեջ ոչ որպես բանաստեղծ, այլ որպես թարգմանիչ:

1614 թվականին, Հակոբը, լատիներենից հայերեն թարգմանեց հնդկական ծագում ունեցող, բայց միջին դարերում արևելյան ու եվրոպական համարյա բոլոր լեզուներով թարգմանված և բազմաթիվ խմբագրությունների ենթարկված հետաքրքիր խրատական առակների ու պատմավածքների այն ժողովածուն, որ կոչվում է «Գալիլա և Դիմնա» կամ «Պատմութիւն եօթն իմաստասիրաց»:

Այդ գրքի ներքին արժանիքները, ինչպես և թարգմանչի ճաշակը և ժողովրդական խոսակցության ճկուն ու գրավիչ լեզուն ապահովեցին այդ թարգմանության համար լայն տարածում և մեծ ընդունելություն ողջ Հայաստանում և հայկական գաղթավայրերում:

Իր քրտարածվեց ձեռագիր բազմաթիվ ընդօրինակություններով և XVII—XIX դարերի ընթացքում լույս ընծայվեց 10 անգամ: Առաջին անգամ տպագրվեց 1693 թ. Կ. Պոլսում՝ «Դիրք պատմութեանց կայսերն Փոնցիանոսի և կնոջն և որդւոյն Դիոկղետիանոսի և յեօթանց իմաստասիրաց» խորագրով: Ապա Լիվոռոյում՝ 1696 թ., Կ. Պոլսում՝ 1721, 1740, 1753, 1792, 1796, 1804 թվականներին, Մադրասում՝ 1790 թ., Թբիլիսիում՝ 1857 թ.:

Հայերենից կատարվեց հայատառ տաճկերեն թարգմանություն, որը տպագրվեց 4 անգամ, ապա թարգմանվեց նաև ռուսերեն (1847) և ֆրանսերեն (1919) լեզուներով:

Ղազար եպիսկոպոս Թոխաթեցին ևս (1550—1610), Հակոբ Թոխաթեցու նման, հայրենի քաղաքից Ուկրաինա գաղթեց 1602 թ. աղետի ժամանակ: Նա հաստատվեց Յազլովցա քաղաքում, ուր կար 20-ի չափ հայ ընտանիք:

Րբ բանաստեղծություններից մեկում նա գրում է.

«Ղազար գերի, մեղօք գմբած,
Պանդուխտ եղար մէջ ուռուղաց,
Դու հոգ մ'ածեր, տէրն ողորմած,
Տանի իւր տեղն ամէն ցրուած»:

Բայց, ըստ երևույթին, նրա հույսերը չեն իրականանում և նա մինչև իր կյանքի վերջը պանդուխտ էլ մնում է:

1605—1606 թթ. Յազլովցայում, իր Արիստակես և Կարապետ աշակերտների խնդրանքով, Ղազարը հորինում է հայրենի Թոխաթի ավերման մասին երեք տաղ: Նախերգանքի մեջ գրում է.

«Կենամբ քաղաք գիւղանման,
Քսան տուն կայ ժողովրդեան,
Չունինք գրեան, Ասմաւորքեան,
Ոչ ճաշու գիրք, ոչ Գանձարան,
Անմխիթար եմք, տըխրական,
Չի կար փեշա և գործարան.
Մնացաք ալարապ և առանց բան,
Դրեցաք տետրակս ի Ծաղովցան»:

¹ Ն. Ակիմյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 178—202:

² Նույն տեղում, էջ 207:

1606 թ. Ղազարը տեղափոխվում է ՏԲ մայրաքաղաքն Կամենից, երկիրն ընդգրկող և Իլախաց, այստեղ ընդօրինակում է մի շարք ձեռագրեր և այլն։ Համեմատարար արժեքավոր է նրա Շիրվասանք ի վերայ Թոխաթ քաղաքի՝ ստեղծագործությունը։

* * *

Ուկրաինայի աջափնյա հոգերը (Կիևշինա, Վոլին, Պոդոլիա) XVII դարի ազատագրական պայքարից հետո, դեռ երկար ժամանակ, մնացին պանական Լեհաստանի ճորտատիրական լծի տակ։ Լեհ իշխանությունների և Վստրիկանի ազենտների ճնշումն ու ասիմիլյատորական քաղաքականությունը հայերի նկատմամբ հետագայում ավելի ուժեղացավ։ Եվ երբ շուրջ մեկ հարյուրամյակ հետո, XVIII դարի վերջերին, Արևմտյան Ուկրաինան ևս Ռուսաստանի օգնությամբ ազատագրվեց լեհական լծից, այդ վայրերի հայերն արդեն անդարձորեն՝ լեզվով, հավատով ու սովորություններով, ձուլվել էին լեհերի հետ։

Սակայն ուկրաինահայ գաղթավայրերի հիշատակները վառ են մնում և կմնան երկար, քանի որ կան և պահպանվում են այնտեղ ստեղծված գրական ու պատմագիտական արժեքավոր հուշարձանները և հարյուրավոր այն ձեռագրերը, որոնք ընդօրինակվելով այնտեղ այժմ խնամքով պահվում են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատանը և Հայկական ձեռագրերի այլ հավաքածուներում։ Այդ հիշատակները չեն մոռացվի նաև Ուկրաինայում, որովհետև իրենց երկրորդ հայրենիքում հաստատվելով հայ գաղթականները զբաղվեցին ստեղծարար ու խաղաղ աշխատանքով, իրենց լուծման մոծեցին ուկրաինական քաղաքների զարգացման գործում, զարկ տվեցին առևտրի ու արհեստների զարգացմանը։

Մինչև օրս էլ Աջափնյա Ուկրաինայի շատ վայրերում կանգուն են հայերի ստեղծարար աշխատանքով կերտված ճարտարապետական մի շարք հուշարձաններ, որոնք իրենց հերթին վառ են պահում ուկրաինահայ գաղթի հիշատակները և վկայում են ուկրաինացի և հայ եղբայրական ու բախտակից ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական մերձավոր և բարեկամական բազմադարյա կապերի մասին։